

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐՈՒ ՏՈՒՆԸ ՉԱՆՉԱՆԻՉ ՄԵՏԱՄԱՍՆՈՒԹԵԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՅՉ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԾԵԼԸ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կը տեղեկացնէ, որ Ներկայացուցիչներու տան լիազումար նիստը Երեքշաբթի, 29 Հոկտեմբերին ընդունեց քննարկականներ Էտրմ Շիֆի եւ Կաս Պիլիբաքիսի համահեղինակած՝ Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչող թիւ 296 բանաձեւը:

Բանաձեւին ի նպաստ քուէարկեցին 405, իսկ դեմ՝ 11 քննարկականներ: Ձեռնապահ մնացին երեք քննարկականներ, բացակայ էին 13 ուրիշներ:

Յայտնենք, որ Ներկայացուցիչներու տան Օրէնքներու Յանձնախումբը երկուշաբթի օր հաստատեց Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը պահանջող թիւ 296 բանաձեւը քուէարկութեան դնելու որոշումը, յայտնելով, որ անոր քննարկումը եւ քուէարկութիւնը տեղի պիտի ունենան 29 Հոկտեմբերի յետմիջօրէին:

Յանձնախումբը անելի ուշ վաւերացուց բանաձեւը քուէարկութեան դնելու որոշումը նաեւ շեշտելով, որ գայն որեւէ ձեւով փոխելու առիթ պիտի տրուի:

Երեքշաբթի օր, Ներկայացուցիչներու տան լիազումար նիստը վաւերացուց բանաձեւը քուէարկութեան դնելու յանձնախումբին որոշումը (223-191 քուէներով):

Բանաձեւը Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ այդ ոճիրին զոհերուն պատշաճ ոգեկոչում ապահովելու կողքին, կը շեշտէ Հայոց Ցեղասպանութեան ուրացման կտրուկ մերժումն եւ անոր դասաւանդման կարեւորութիւնը, իբրեւ նման ոճիրներու կանխարգիլման կարեւոր միջոց:



Յանձնախումբը անելի ուշ վաւերացուց բանաձեւը քուէարկութեան դնելու որոշումը նաեւ շեշտելով, որ գայն որեւէ ձեւով փոխելու առիթ պիտի տրուի:

ՀԱՂՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՕՒ-Ի 39-ՐԴ ՇՐՋ. ՊԱՏՉԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՍՕ Խաչի 39-րդ Շրջ. Պատգամաւորական ժողովի Բ. նիստը ընթացք առաւ Շաբաթ, 26 Յունիս 2019-ի առաւօտուն, Արամ Մանուկեան ժող. Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս, Ներկայութեամբ Պատկան Մարմինի Ներկա-



յացուցիչ ընկի. Չարմիկ Պողիկեանի, ՍՕ-ի Շրջանային Վարչութեան, մասնաճիւղերէ ընտրուած իրաւասու ձայնով 27 պատգամաւորներու, 28 խորհրդ-
Դիւան

ՍՕ Խաչի 39-րդ Շրջ. Պատգամաւորական ժողովի
 Շաբ.՝ Էջ 16 ➤

ՀԱՂՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 27 Հոկտեմբեր 2019-ին, ԱՄԺ Տան «Լ. Շանթ» սրահէն ներս տեղի ունեցաւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան



Սուրբոյ ԻԲ. Ներկայացուցչական ժողովը օրհնութեամբ եւ ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Չօպու-

Դիւան
 Համազգայինի Սուրբոյ ԻԲ. Ներկայացուցչական ժողովի
 Շաբ.՝ Էջ 16 ➤

ՀԱՂՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒՍՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ (167-ՐԴ ՆԻՍՏ)

Նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշնորհ Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանա-



կան ժողովի 167-րդ նիստը գումարուեցաւ Հինգշաբթի, 24/10/2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս եւ շարունակուեցաւ Ուրբաթ, 25 Հոկտեմբեր 2019-ին առաւօտեան ժամը 10:00-ին, Ներկայութեամբ Ճեգիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգեշնորհ Տ. Լեւոն Աբեղայ Եղիայեանի, թեմի երեսփոխաններուն, Ազգ. Կրօնական եւ Ազգ. Վարչութեան շրջանաւարտ կազմերուն, ինչպէս նաեւ Ազգ. Խորհուրդներու ատենապետներուն եւ Ազգ. Կրթական հաստատութիւններու տնօրէններուն եւ ինսամակալութեան ու հոգաբարձութեան ատենապետներու:

Նիստը յատկացուած էր Թեմի շրջանաւարտ Գործադիր Իշխանութեան գոյգ կազմերուն՝ Ազգ. Կրօնական ժողովի եւ Ազգ. Վարչութեան գործունեութեան երկամեայ (2017-2019) տեղեկագիրներու քննարկման. արժեւորման եւ նոր կազմերու ընտրութեան:

Բացման նիստը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 24 Հոկտեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 7:00-ին Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս:

Բացման առօթքէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը իր սրտի խօսքով, ուրախութիւն յայտնեց նիստին գումարման առիթով, գայն նկատելով վաւերական եւ ընդգծեց անոր կարեւորութիւնը, երբ Բերիոյ Հայոց Թեմը եւ մեր ժողովուրդը այս փուլին, յատկապէս սուրիական հայրենիքի քաղաքական իրավիճակի նոր գարգացումներու լոյսին տակ՝ կը գտնուի նոր մարտահրաւերներու առաջ, հրաւիրեց ներկաները լուրջ եւ գործուն մասնակցութիւն բերելու նիստի բաժիններուն, արդիւնաւետ գործունեութիւն եւ յաջողութիւն մաղթելով բոլորին:

Ապա յոտնկայս կարողացուեցաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Օրհնութեան Գիրը՝ ուղղուած Թեմի Ազգ. Երեսփոխանական 167-րդ Նիստին:

Վեհափառ Հայրապետը, Օրհնութեան Գիրով գոհունակութիւն կը յայտնէ ժողովի գումարման եւ կարեւորութեամբ կը հաստատէ, որ Սուրիան հանգըրուանային կերպով կը շարունակէ վերականգնումի եւ վերակազմակերպումի ընթացքը, եւ անհրաժեշտ է որ շրջանը նաեւ վերանորոգ նուիրումով շարունակէ վերականգնումի գործընթացը, առաջնահերթութիւններու ճշդումով, ուշադրութեան առարկայ դարձնելով նաեւ Թեմի հեռաւոր շրջաններու վերակազմակերպումը:

Վեհափառ Հայրապետը վստահեցուց ժողովը, որ Սուրբ Աթոռը, ինչպէս միշտ, կը մնայ զօրակից եւ աջակից մեր բոլոր աշխատանքներուն, առ Բարձրեալն առօթք առաքելով, որ ամբողջական խաղաղութիւն պարգեւէ Սուրիոյ եւ համերաշխ համակցութեամբ ու եղբայրական մթնոլորտի մէջ առաւել ծաղկի Սուրիական Հայրենիքը:

Ժողովը ունկնդրեց Ճեգիրէի նորանշանակ Առաջնորդական Փոխանորդ՝ Հոգեշնորհ Տ.Լեւոն Աբեղայ Եղիայեանի համապարփակ գեկոյցը՝ շրջանին մէջ տիրող իրավիճակի շուրջ:

Ներկայացուցեց նաեւ Թեմի շրջանաւարտ Ազգ. Կրօնական ժողովի, Թեմի խառն ժողովի նիստերու եւ Ազգ. Վարչութեան երկամեայ տեղեկագիրները, որոնք հանգամանօրէն փոխանցեցին շրջանաւարտ երկամեակի վարչական, ժողովական, հոգեւոր, միջ- համայնքային, միջ-եկեղե-

Դիւան
 Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի
 Շաբ.՝ Էջ 16 ➤

Խմբագրական

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՉՆՈՒՄԻ ԾԱՄԲՈՒՆ

ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու տան լիազուստ և անվտանգ շարժման, 29 Հոկտեմբերին ընդունեց Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչող 296 թուակիր բանաձեւը:

Ընկերակազմներ բանաձեւին ի նպաստ վկայութիւններ տալով յստակօրէն արտայայտուեցան Հայոց Ցեղասպանութեան մասին, տապալելով բոլոր այն ջանքերը, զորս Թուրքիան տարիներ շարունակ, հսկայ գումարներ մխիւսելով, ի գործ կը դնէր՝ կասեցնելու արդարութեան հաստատման նպաստող իւրաքանչիւր փորձ եւ նման նիստերու օրակարգերէն դուրս պահելու Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը:

Ինչո՞ւ, որովհետեւ, նոյնիսկ չունենալով օրէնքի ուժ, նման բանաձեւեր մեծ պետութիւններու նման հարթակներուն վրայ արծարծուելով կը նպաստեն հանրային կարծիքի ձեւաւորման, իսկ հանրային կարծիքը, յատկապէս գերպետութիւններու քաղաքական նման բեմերէ հնչած բանաձեւերու լոյսին տակ, ազդելու, որոշումներ գոյացնելու եւ օրէնքներ հաստատելու ազդեցութիւն ձեռք կը բերէ ե՛լ տուեալ երկրին եւ այլ երկիրներու մէջ, միշտ քաղաքական ճիշդ պահուն, քաղաքական ճիշդ աշխատանքներ տանող կողմերուն ծրագրեալ աշխատանքին իբրեւ արդիւնք:

Այս իմաստով, Հայ Դատի յանձնախումբերը պահը լաւագոյնս օգտագործելով, քաղաքական, մասնագիտական հետեւողական աշխատանքով, տիրապետած ըլլալով ԱՄՆ-ի քաղաքական դաշտին, ազդեցիկ ուժ դառնալու կարելիութիւնը նուաճած են տարիներու իրենց փորձառութեան շնորհիւ:

Բանաձեւը Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ այդ ոճիրին զոհերուն պատշաճ ոգեկոչում ապահովելու կողքին, կը շեշտէ Հայոց Ցեղասպանութեան ուրացման կտրական մերժումը եւ անոր դասաւանդման կարեւորութիւնը կը հաստատէ, իբրեւ նման ոճիրներու կանխարգիւման միջոց: Աւելին՝ ան համարձակ քայլ մըն է Միացեալ Նահանգները գերծ պահելու թրջական ճնշումներէն եւ զինք ուրացման քաղաքականութեան մեղսակից դարձնելու նկրտումներէն:

Որքան տարածում գտնէ նման բանաձեւերու ընդունումը, այնքան կ'ամրագրուին մեր ժողովուրդին ու հայրենիքին անվճար տանգութեան երաշխիքները:

Ամերիկահայ համայնքին կազմակերպուած աշխատանքին արգասիքն է նաեւ սա, որ ցոյց կու տայ, թէ Հայ Դատի պաշտպանութեան զինուորագրուած նուիրեալները արթուն կը հսկեն քաղաքական տարբեր բեմերու վրայ, ճիշդ պահը, ճիշդ քաղաքական աշխատանքով օգտագործելու եւ զայն ծառայեցնելու մեր դատին, մեր ժողովուրդին, արդարութեան վերականգնումի երկար, դժուար, բայց յաղթահարելի ուղիին:

Քաղաքական դաշտը հաշուարկներու թնճուկ մըն է: Իսկ հայ ժողովուրդի իրաւունքներուն վերականգնումը այդ դաշտին մէջ բացուած ճամբէն կ'ընթանայ: Ծամբան երկար է, մանուածապատ, բայց յուսալից, այնքան ատեն որ քաղաքական հաշուարկները ատենին օգտագործելու համար արթուն միտքեր կը հսկեն մեր ժողովուրդի արդար պահանջներուն իրականացման գործընթացին:

«Գ.»



ՀԱՊՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՕՒ-Ը ՆԻԻԹԱՊԵՆԵԻ ԲԱՐՈՅԱՊԵՍ ԶՕՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆՉՆԻ ՍՈՒՐԻՈՅ ՀԻՄՆԱՍՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ի հետեւումն ՍՕ Խաչի 39-րդ Պատգամաւորական ժողովի որոշումին, ՍՕ Խաչի մեծ ընտանիքը կը դատապարտէ թրջական գործին ոտնձգութիւնները եւ բարբարոսութիւնները սուրիական հողերուն ու Սուրիոյ բնակչութեան նկատմամբ: Միութիւնս Սուրիոյ հիւսիսային շրջանին ուղղութեամբ կատարուած յարձակումներուն հետեւանքով բնակչութեան տեղահանութիւնն ու մարդկային ծանր պայմանները նկատի ունենալով, մէկ միլիոն սուրիական ոսկի կը քուէարկէ՝ առ ի գօրակցութիւն Սուրիոյ հիւսիսային շրջանին մէջ տակաւին մաքառող մեր խաչուհիներու ընտանիքներուն եւ անոնց պարագաներուն:

ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւն 26/10/2019

-Երեքշաբթի, 29 Հոկտեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Տեր Զօրի Նահանգապետարանը կամուրջ մը կառուցած է Եփրատ գետի ափերուն միջեւ՝ հասնելով յարակից Մրէի եւ Մրաթ գիւղերը: Աղբիւրը յայտնեց, որ կամուրջը առաջինը կը նկատուի, պատերազմի տարիներուն Ուաշինկթընի կողմէ Եփրատի բոլոր կամուրջներուն քանդումէն ետք:



Տեր Զօրի Նահանգապետ Ապտուլ Մաճիտ Բաուաքիյի շեշտեց, որ կամուրջը հաստատուեցաւ բնակիչներուն պահանջին հիման վրայ: Անոնք փափաք կը յայտնէին, որ Եփրատի ափերուն միջեւ կամուրջ մը հաստատուի եւ Տեր Զօրէն դեպի այլ Նահանգներ երթելու թրջական դրութիւնը վերահաստատուի: Բաուաքիյի աւելցուց, որ այսուհետեւ կամուրջին միջոցաւ ապրանքներու եւ գիւղատնտեսական արտադրութիւններու փոխանակում կրնայ տեղի ունենալ ճեզիրէ շրջանին եւ սուրիական այլ Նահանգներուն միջեւ:

-Երեքշաբթի, 29 Հոկտեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական բանակը կը տարածուի Հափսէի հիւսիսային արուարձանի սուրիական թրջական սահմանին վրայ արեւելեան Ռաս ուլ Այնի արեւմուտքէն հասնելով Գամիշլիի արեւելք: Բանակը իր վերահսկողութեան կեդրոնները հաստատած է շուրջ 90 Զմ. տարածութեան վրայ:



-Յոյն Գործարարներու Միութեան նախագահ Իանուս Մանտրինոս, պատուիրակութեամբ մը Դամասկոս այցելեց, երկու երկիրներուն միջեւ տընտեսական յարաբերութիւնները ամրապնդելու համար:



Այցելութիւնը տեղի ունեցաւ նախ որդ տարուան ընթացքին սուրիական կողմին հետ ստորագրուած փոխըմբռումի յուշագիրը ի գործ դնելու համար:

Այս առիթով, Դամասկոսի ամբաստանողի գրասենեակի նախագահ Ղասսան Զիլաա յայտնեց, որ յուշագիրը կ'ընդգրկէր Յունաստանի եւ Սուրիոյ միջեւ ծովային փոխադրութեան գիծ մը բանալու ծրագիրը: Ներկայիս լուրջ աշխատանք կը տարուի այս ուղղութեամբ:

Հայկական Լուրեր

ՀՅԴ ԲԻՒՐՈՆ ԿՈՂՉՈՒՆԷ ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԳՈՒՄԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՂ ՈՒ ԱՄՐԱԳՐՈՂ ԱՄՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՆՆԵՐՈՒ ՊԱՄԱՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Միացեալ Նահանգներու կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը ամրագրող Ներկայացուցչական Պալատի թիւ 296 բանաձեւի որդեգրումին առիթով, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան տարածած է հետեւեալ յայտարարութիւնը.

«Այս բանաձեւի քուէարկութիւնը պատմական է, որովհետեւ մօտ 35 տարիէ ի վեր առաջին անգամն է, որ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան լիազումար ժողովին կը բերուի Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ այսպիսի համապարփակ բանաձեւ: Անցնող տասնամեակներուն Նոյն Պալատին մէջ թէեւ խորհրդակցական որոշումներ գոյացան, սակայն նման ամբողջական բանաձեւ քուէարկութեան չէր բերուեր, որովհետեւ միշտ ալ պարզ էր, որ Ներկայացուցչական պարագային՝ վստահօրէն պիտի որդեգրուեր:

«Ամենայնդէպս, հիմա որ բանաձեւը որդեգրուած է, եւ վերահաստատուած ու ամրագրուած՝ Միացեալ Նահանգներուն կողմէ Հայկական Յեղասպանութիւնը ճանչնալու փաստը, պարտինք շնորհակալութիւն յայտնել ԱՄՆի քաղաքական այն գործիչներուն, որոնք այս հարցին հետեւողականօրէն աջակցած են եւ հիմա ալ կողմ քուէարկեցին: Այս յաղթանակը արդիւնքն է տասնամեակներ շարունակ Միացեալ Նահանգներու մէջ տարուած անդուլ պայքարին. ան յատկապէս արգասիքն է ԱՄՆի մեր՝ ՀՅԴ կառույցներուն եւ մարմիններուն, Հայ Դատի յանձնախումբերուն եւ գրասենեակներուն հետեւողական, ծրագրուած եւ ճշգրտուած աշխատանքներուն, որուն մասնակից եղաւ նաեւ ամերիկահայ համայնքի մէկ կարեւոր մասը: Բոլորին վարձքը կատար:



«Ներկայացուցիչներու Պալատի այս բանաձեւը ոչ միայն վերահաստատեց եւ ամրագրեց Միացեալ Նահանգներուն կողմէ Հայոց Յեղասպանութիւնը ճանչնալու փաստը, այլ պաշտօնապէս մերժեց նաեւ Թուրքիոյ ժխտողական քաղաքականութիւնը: Ներկայացուցիչներու Պալատի երկու կուսակցութիւններուն կողմէ այս նախաձեռնութեան ստացած մեծ նեցուկը ճամբայ կը բանայ, որ Ծերակոյտն ալ որդեգրէ նմանօրինակ բովանդակութեամբ թիւ 150 բանաձեւը եւ Միացեալ Նահանգներու նախագահին ալ կը մղէ ազնիւ եւ անկեղծ ոգեկոչում կատարելու առանց շրջանցելու ցեղասպանութեան բառին օգտագործումը:

«Համաշխարհային գետնի վրայ, ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու Պալատի այս որոշումը կարեւոր մարտահրաւեր է արդարութիւնը խոչընդոտելու Թուրքիոյ քաղաքականութեան, եւ կը նպաստէ Առաջին Աշխարհամարտի ընթացքին Թուրքիոյ կողմէ հայ ժողովուրդին եւ այլ ժողովուրդներու դէմ գործադրուած ոճիրներուն իրական, արդարացի եւ ամբողջական կարգաւորում բերելու պայքարին: Անգամ մը եւս կը փափաքենք շեշտել որ այս բանաձեւին կարեւոր պատգամներն է նաեւ այն ազդարարութիւնը, որ մարդկութեան դէմ յանցագործութիւններն ու ցեղասպանութիւնները անհանդուրժելի են քաղաքակիրթ աշխարհին համար, եւ Նոյնքան անընդունելի է անոնց ժխտումը, անկախ անկէ թէ ո՛վ, ե՛րբ, ո՛ր կը կատարէ այդ ոճիրները»:

ՀՅԴ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ 29 Հոկտեմբեր 2019

ԱՉԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ՝ ԱՆԹԻԼԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Նախագահութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին, Երեքշաբթի, 29 Հոկտեմբեր 2019-ին Անթիլիասի մայրավանքին մէջ սկսան Ազգային Կեդրոնական Վարչութեան լիակատար նիստերը:



Երեկ ամբողջ օրը հանդիպում ունեցաւ Կրօնական ժողովը: Այսօր հանդիպում պիտի ունենայ Զաղաքական ժողովը, իսկ Հինգշաբթի Կրօնական ու Զաղաքական ժողովները պիտի ունենան իրենց միացեալ նիստը:

ԱՄՆ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՃՆԱԽՈՒՄԸ. «ԱՄՆ ԶՈՆԿՐԵՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՆՆԵՐՈՒ ՊԱՄԱՏԻ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԸ»

Երեւան, «Երկիր».- ԱՄՆ Հայ Դատի Յանձնախումբը կը յայտնէ. «Մեծ հարուած հասցնելով Անգարայի կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման համար արդարութեան հասնելու ճիգերու խոչընդոտման՝ ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատը 29 Հոկտեմբերին ճշգրտեց մեծամասնութեամբ ի նպաստ քուէարկեց Յեղասպանութիւնը ճանչցող թիւ 296 բանաձեւին, որ պաշտօնապէս կը մերժէ Թուրքիոյ ժխտողականութիւնը հայերու, յոյներու, ասորիներու, քաղղէացիներու, սուրիացիներու, մարոնականներու եւ շարք մը այլ քրիստոնէայ ազգերու նկատմամբ իր կողմէ իրագործուած ցեղասպանութեան համար: Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող թիւ 296 բանաձեւը ընդունուեցաւ ծայներու՝ 405 կողմ, 11 դէմ եւ 3 ձեռնպահ յարաբերակցութեամբ»:



Յանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան ըսաւ. «ԱՄՆ Հայ Դատի Յանձնախումբը կ'ողջունէ ԱՄՆ Զոնկրեսի Ներկայացուցիչներու պալատի քուէարկութիւնը, որ վերջ կը դնէ Ամերիկայի պատմութեան մէջ ամենաերկարատեւ, օտար վեթոյիս: Այժմ մենք պետք է վճռականօրէն շարժինք հասնելու մարդկութեան դէմ Թուրքիոյ իրագործած ոճրագործութեան ճշմարիտ, արդար եւ համապարփակ լուծումին, որ խլեց աւելի քան 1,5 միլիոն անմեղ հայերու կեանքը: Հակառակ անոր որ շատ բան կարելի է ըսել քուէարկութեան մասին, բայց ամէն ինչ պարզ է: Նախ՝ այս քուէարկութիւնը բացայայտեց, որ Անգարան կը շարունակէր Ամերիկան ներգրաւել Հայոց Յեղասպանութեան հարցով արդարութիւնը խոչընդոտող երկիրներուն ցանկին մէջ: Երկրորդ՝ այս քուէարկութիւնը Ամերիկան դասեց արդարութեան կողմը: Հայոց Յեղասպանութեան գոհերուն ու վերապրած սերունդներուն համար պահանջուող այն արդարութեան, որ շատ երկար ժամանակ մերժուած էր»:

Հայոց Յեղասպանութեան մասին թիւ 296 բանաձեւը կը սահմանէ՝ 1) Հայոց Յեղասպանութեան ժխտումը մերժել, 2) ԱՄՆ-ի պաշտօնական կառավարութեան կողմէ այս յանցագործութեան ճանաչումն ու ոգեկոչումը իրականացնել, 3) Աջակցութիւն տրամադրել Հայոց Յեղասպանութեան մասին կրթական ծրագիրներու համար՝ ժամանակակից վայրագութիւնները կանխելու նպատակով:

ՎՐԻՊԱԿ

ՍԱՐԳԻՍ ՄԱՐՈՒԹԵԱՆ. «ԱՎՈՒՄԲԻ ՄԹՆՈՒՈՐՏԸ ՄԵՐ ԱՉԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԱՆԱՐԱՐՏ ՊԱՀԱԾ Է»

«Գանձասար»ի Նախորդ թիւով իրատարակուած այս յօդուածին կարգ մը պարբերութիւններու ոչ- ամբողջական տեղեկութիւններուն համար՝ կրկին կը իրատարակեմք զանոնք:

Սարգիս Մարութեան տասնհինգ տարի ծառայած է Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանէն ներս, որպէս ինսամակալ եւ 2017-ին Ճեմարանի 70-ամեակին առիթով պարգեւատրուած՝ իր անսակարկ ծառայութեան համար: Եղած է հաշուեքննիչ, Տնտեսական Խորհուրդի անդամ, Համագայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան անդամ, Հայ Դատի Հիմնադրամի անդամ եւ Սպիտակի երկրաշարժի օրերուն հանդերձահաւաքի պատասխանատու: Գաւառական ժողովին կողմէ նշանակուած է դիւանատան հաշիւներու հաշուեքննիչ:

Յատուկ ուշադրութեան արժանի եղած է Թիլէլի ՀՄԸՄ-ի ակումբը, որ ինքնուրոյն դեր ունեցած է երբեմնի հայ կենսքին մէջ:

ՀՄԸՄ-ին յատկացուած էր մասնաւոր սենեակ մը, ուրկէ սկսուեցին ու գայլիկները իրենց պետք եղած մարգական եւ սկսուտական տարագները կը գնէին նուազ գիններով:

ՀՄԸՄ-ի անուրջ ժամանակի ընթացքին պետութեան կողմէ փոխուած է: Թիլէլի մէջ գործած շրջանին կը կոչուէր՝ ՀՄԸՄ, ապա՝ Նատի Սուրի Ռիատի, ետքը՝ Ալ Եարմուք անուանումը ստացած է:

Իւրաքանչիւր անգամ հերթականօրէն Միութեան կը նուիրէր 25 ս.ո., որ այդ օրերուն կոկիկ գումար մը կը կազմէր եւ հաւաքուած գումարը կը նպաստէր Միութեան աշխատանքներուն, ի մասնաւորի հուկարացի ֆուլպոյի մարզիչին ամսական վճարումը ապահովելու:

Այդ օրերուն մեր հայերէնի ուսուցիչը Սիմոն Սիմոնեանն էր, իսկ ընդ. պատմութեան ուսուցիչը՝ Սարգիս Եփփուճեանը: Յետագային վարժարանի տնօրէն եղած է Արմէն Անոյշը: Ուսուցիչներէս կը յիշեմ պրն. Թեօթիլեանը, պրն. Սիմոնեանն ու պրն. Դերձակեանը:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՌԻՂԱՄՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԱՅՆԱԽՈՏՈՒԹԵԱՆ ՆՊԱՐՏ ԱՍՊԵՏԸ (ՌՈՒՔԵՆ ՅՈՎԱՏԷՓԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 80-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՌՈՎ)



Նազարեթ Պերպերեան

16 Հոկտեմբերին, Համազգայինի կազմակերպությամբ, Երեւանի մէջ տեղի ունեցաւ Ռուբէն Յովսէփեանի ծննդեան 80-ամեակին նուիրուած յիշատակի երեկոյ:

Ռուբէն Յովսէփեան արձակագիրին, բեմագրողին, թարգմանիչին եւ ընդհանրապէս գլխաւոր մտաւորականին մասին ըստ արժանուրէն գրուած է եւ այսօր ալ կը գրուի ու կը վկայուի հայ մշակոյթի եւ գրականութեան վաւերական դէմքերուն կողմէ:

Այս էջով անձնական տպաւորութիւններու եւ ընկերական մտերմիկ պահերու հակիրճ արձանագրութիւն մը կը գումարուի Ռուբէն Յովսէփեան մարդուն եւ Դաշնակցականին նուիրուած վկայութեանը վրայ:

Ընկեր Ռուբէնի հետ մեր ծանօթութիւնը գրականութենէն չի գար այնքան, որքան Սիտնիի (Աւստրալիա) մէջ 1989-ի Ապրիլի վերջ-Մայիսի սկիզբը մեր ունեցած պատահական մէկ հանդիպումէն:

Թեւ 1970-ականներուն Ռուբէն Յովսէփեան՝ իբրեւ հայրենի երիտասարդ արձակագիր, արդէն ծանօթ անուն էր «Բագին» ամսագիրին շուրջ հաւաքուած եւ Պօղոս Սևապեանի աշակերտած մեր սերունդին համար, բայց ո՛չ ինք Լիբանան ասպարած տարիներու Պեյրութ այցելած էր, ոչ ալ եւ 1977-ի Հոկտեմբերին Երեւան այցելութեանս ընթացքին բախտը ունեցած էր տաղանդաւոր գրողին հետ հանդիպելու:

1989-ին, երբ ՀՀԴ Բիւրոյի Կեդրոնական գրասենեակին հետ «Դրօշակ»-ի խմբագրութեան Յունաստան տեղափոխութեամբ ընտանեօք հաստատուած էի Աթէնք, ՀՀԴ Աւստրալիոյ Հայ Դատի յանձնախումբին կողմէ հրաւիրուեցայ Սիտնի, Ապրիլ 24-ին նուիրուած քաղաքական ձեռնարկին հայերէնով բանախօսելու համար: Այդ օրերուն հորհրդային Հայաստանի Սփիւռքի հետ Մշակութային կապի կոմիտէին կողմէ Աւստրալիա հրաւիրուած էր մշակոյթի եւ արուեստի գործիչներէ բաղկացած բազմանդամ պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին (եթէ յիշողութիւնս չի դաւաճաներ) Արաքս Մանտրեանի եւ Սիլվա Եուզպաշեանի օրինակով ծանօթ արժէքներ: Ռուբէն Յովսէփեան կը գլխաւորէր պատուիրակութիւնը:

Մեր առաջին հանդիպումը կայացաւ այդ օրերուն, երկրագունդի ծայրամասին կազմուած մեր սքանչելի գաղութի հիւրընկալ ու ջերմ մթնոլորտին մէջ: Տարրական ծանօթացման հանդիպում էր եղածը: Այդուհանդերձ՝ Ռուբէնը անջնշելի տպաւորութիւն թողուց իմ վրայ՝ Սիտնիի ՀՀԴ ակումբին մէջ հայրենական պատուիրակութեան ի պատիւ կազմակերպուած ընդունելութեան ընթացքին: Պատուիրակութեան պատասխանատուի իր հանգամանքով՝ Ռուբէն Յովսէփեան

սրահի բեմէն ունեցած իր ելոյթին ընթացքին արժանաւորապէս կարեւորեց դաշնակցական ակումբի մը մէջ համախմբուած գաղափարական տարբեր, այլեւ ներհակ կողմնորոշումներու տեր աստրալիահայերու եւ հայրենիքէն եկած պատուիրակներու: 1988-ի Արցախեան շարժումով արագ թափ ստացած համահայկական մերձեցման այդ համընդհանուր գարթօնը որչունելու իր ելոյթէն ետք, բեմէն վար իջնելու պահուն, մոռցուած բան մը յանկարծ մտաբերողի աճապարանքով, Ռուբէնը ետ բարձրացաւ բեմ եւ շատ լուրջ ու հանդիսաւոր դէմքի արտայայտութեամբ՝ աջ ձեռքի մատներով յարթանակի նշանը բարձրացնելով՝ կեցցէ՝ Սովետական Միութիւնը ըսաւ եւ վար իջաւ...

Սրահը պահ մը ցնցուեցաւ եւ քար լուծիւն տիրեց, մինչեւ որ որոտընդոտ ծափերով սրահը ընկալեց եւ որչունեց Ռուբէն Յովսէփեանին՝ ազատագրուած հայ մտաւորականի անխառն հեղանակով պատգամը:

Պարզ, սակաւախօս, անդեղ եւ ճակատաբաց գաղափարակիրի այդ պատկերով եւ ճանչցայ Ռուբէն Յովսէփեանը, որ մինչեւ իր ապաժամ մահը ամէն օր նոր բառ մը եւ սրտաբուխ խորհուրդ մը արեւելուց խորաթափանց հայ մտաւորականի իր անկաշկանդ ներաշխարհին վրայ:

Ռուբէն Յովսէփեանի հետ մեր յաջորդ հանդիպումը կայացաւ Երեւանի մէջ, 1990-ի Հոկտեմբերին, երբ ՀՀԴ պաշտօնաթերթը «Դրօշակ»-ի գլխաւոր խմբագիրի հանգամանքով՝ Բիւրոս գիտ գործուղած էր հայրենիք, ընդհանրապէս մօտէն հետեւելու հայրենիքը փոթորկած պատմակերտ վերիվայրումներուն, նաեւ ու մանաւանդ մասնակցելու ՀՀԴ հայաստանեան վերընծիւղուած կազմակերպութեան անդրանիկ Շրջանային ժողովին, որ տեղի ունեցաւ Նոյեմբերի վերջերուն, Ազուերան:

Ռուբէն (ինչպէս որ զինք կը սիրէր կոչել հանգուցեալ Մուշեղ Միքայելեան, ՀՀԴ Բիւրոյի հայաստանեան պաշտօնաթերթ «Ազատամարտ»-ի գլխաւոր խմբագիրը եւ հետագայի եռանդամ մեր ընկերութեան ամենէն ջղուտ՝ սասունցի՝ մտաւորականը) արդէն միացած էր Դաշնակցութեան հայաստանեան դեռ չբացայայտուած շարքերուն: Ատենի ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Հրայր Մարութեան ծանօթ էր Ռուբէնին եւ իմ միջեւ ստեղծուած գաղափարական մօտիկութեան, պարբերաբար գանգատ կ'արտայայտէր Ռուբէն Յովսէփեանի (իբրեւ թէ հին ռեժիմի նոսնակատուրայի

(պաշտօնացուցակի-խմբ.) ներկայացուցիչի) ՀՀԴ շարքեր մուտքին նկատմամբ ատենի մեր «սերմացան» գործիչներէն ոմանց դրսեւորած վերապահութիւններուն ու յարուցած խոչընդոտներուն մասին եւ կը յորդորէր, որ կապերս սերտ պահեմ հայրենի մեր մտաւորականութեան արժանաւոր եւ յարգուած դէմքին հետ:

1990-ի Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն ընկեր Ռուբէնին հետ մեր մտերմութիւնը խորացաւ այն



աստիճան, որ երբ ատենին Բիւրոյի կողմէ կեանքի կոչուած ՀՀԴ Հայաստանի Պատասխանատու մարմինը կը կազմէր ընդատակեայ մեր կուսակցութեան անդրանիկ Շրջանային ժողովի հրաւիրեալ մասնակիցներու ցուցակը եւ Մարմինի որոշ ընկերներ դէմ էին ընկեր Ռուբէնը հրաւիրելուն, իմ դիմումիս ընդառաջելով՝ ընկեր Հրայրը իրեն յատուկ ճկունութեամբ համոզեց Մարմինը, որ Ռուբէնին մասնակցութեան միայն շահ պիտի ունենար ընդհանուր գործը:

Եւ պետք էր տեսնել Շրջանային ժողովի մասնակիցներէն շատերու դէմքին պարզուած գարմանքն ու շփոթը՝ ի տես ընկեր Ռուբէնի որոշ յայտարարումով մուտքին Ազուերանի ժողովարար:

Այդ պահուն իմ ընկերոջ կողքին էի եւ մինչեւ մահ պիտի չմոռնամ անոր հպարտ քայլերով մուտքը գաղափարական մեր ընտանիքի մայր դարպասէն ներս:

Ծանօթ է, որ իրարմէ անտեղեակ եւ խորհրդապահաբար Դաշնակցութեան գիտութեամբ մեր նորագիր ընկերները, այդ ժողովին, չկրցան իրենց քունները կեդրոնացնել եւ ընտրել ՀՀԴ հայաստանեան կազմակերպութեան անդրանիկ Կեդրոնական կոմիտէի կազմը: Բիւրոս մէկ տարուան պաշտօնավարութեան շրջանով կեանքի կոչեց նշանակովի Կեդրոնական կոմիտէ, որուն մաս կազմեց ընկեր Ռուբէնը:

Այդպէս սկսաւ Ռուբէնի շուրջ քառորդ դարու երթը գաղափարական իր նոր ընտանիքէն ներս:

Երթ, որ կուսակցամուլութեան խորհրդային բեռն զգուած հայրենի հայրութեան յոյս ներշնչեց՝ մարմնաւորելով հասուն կերպարը նորօրեայ դաշնակցական գործիչի, որ հայ ազգային արժէքներու ջերմեռանդ պաշտպանութեան դիրքերէն՝ կուսակցական անձնորդի ծառայութեան ուրոյն անանդ մը կտակեց գալիք սերունդներուն:

Ընկեր Ռուբէն Յովսէփեանի դաշնակցական կենսափորձը, իբրեւ կուսակցական պատասխանատու գործիչ եւ կազմակերպական դէկավար ներկայացուցիչ՝ առաջին իսկ

քայլերէն յատկանշուեցաւ Դաշնակցութեան մարմնապէս հեռու պայմաններու մէջ կազմաւորումով:

Կոմկուսի անդամակցութիւնը եւ իբրեւ այդպիսին կազմաւորումը անկասկած իրենց անդրադարձը ունեցած էին ընկեր Ռուբէնի վրայ՝ հասարակական կեանքի եւ գործունեութեան տարբեր բնագաւառներէ ներս ինքնահաստատման ուղի հարթելու առումով:

Այդուհանդերձ՝ 70 ամեայ խորհրդային ամբողջատիրութեան հարթիչ գլանին տակ իր հերթին խոցեր ստանալով եւ անոնց դէմ պայքարելով, Ռուբէն Յովսէփեան ընթերցումներու, մտորումներու եւ յայտնագործումներու իր ազգային ուրոյն աշխարհայեացքը մշակեց ու խորացուց: ՀՀԴ կազմակերպական, բարոյական եւ գաղափարական անանդներուն մասին արդէն ուներ իր ուրոյն պատկերացումները, երբ 1988-ի Արցախեան շարժումէն ետք հրաժարեցաւ Կոմկուսէն եւ 1990-ին միացաւ Դաշնակցութեան: Իսկ 1990-ին նախ ՀՀԴ Հայաստանի Կեդրոնական կոմիտէին, ապա 1992-էն մինչեւ 1996 ՀՀԴ Բիւրոյի անդամ ընտրուելով՝ ընկեր Ռուբէնը ապրեցաւ եւ գործեց այն ամուր համոզումով, որ պատասխանատու մարմիններու անդամ ըլլալ թէ ոչ՝ ինք կոչուած էր ուղին հարթելու հայրենի հողին վրայ Դաշնակցութեան մէջ իրենց գաղափարական ընտանիքը փնտրող երիտասարդներուն: Դաշնակցութեան դրօշակիր գործիչի այդ անդամակցութեան յանձնարարութիւնն ու վճարանշանները պայմանաւորեցին մեր ընկերոջ նետած քայլերը նաեւ ՀՀ Ազգային ժողովի անդամակցութեան ժամանակաշրջանին, երբ պատգամաւորի պաշտօնը իբրեւ ծառայութիւն ընկալեց՝ ընթացիկ եւ առօրեական շահագրգռութիւններէ վեր պահել փորձելով դաշնակցական երեսփոխանի բարոյական վարկն ու հեղինակութիւնը:

Եւ պետք էր տեսնել ընկեր Ռուբէնի ինքնին հիասթափութիւնն ու զգուանքը, երբ ներկուսակցական ընտրական գծով մրցապայքարներու ականատես կը դառնար, կամ դէմ յանդիման կու գար ազատ ու անկախ Հայաստանի պետականութեան հետ իբրեւ անձնական ազարակի վարուելու յոռի բարքերուն:

Շարունակ կ'ազդարարէր արդար քամահրանքով, թէ դաշնակցական չեղանք, որպէսզի ճախորդ սկըսնակի խարխափումներով իրարու վրայ կոխկռտելով որեւէ իշխանութեան սանդուխէն վեր բարձրանալու փորձութեան մատուցիլը...

Զե՞ որ մեր երկիրն ու ժողովուրդը արդէն վճռած են մեկանգամընդմիշտ փակել եւ դարձնել էջը խորհրդային դարաշրջանի այդ սնանկացած փորձութեանց դառն ու կործանարար պատեհապաշտութեանց:

Նոյնպիսի ցատկով ընկեր Ռուբէնը կը հակադարձէր բարոյական եւ գաղափարական դասեր բաշխելու ոմանց յաւակնութեանց, մանաւանդ երբ Սփիւռքի անուսով հայրենականը նսեմացնելու տրամադրութիւններ կը դրսեւորուէին...

Վերջապէս, բայց ոչ վերջինը, ընկեր Ռուբէնի համար դաշնակցա-

ԱԿՆԱՐԿ

ԳՈՂԵՐԸ ՄԵՐ ՕԶԻՔԸ ՉԵՆ ԶԳԵՐ...



Ս. Սահտելյան

Յանգալորի գագառումով վերցրուցի հեռաձայնս, կապ պահելու համար բարեկամի մը հետ, որ ատեն մը առաջ առողջական հարցեր ունեցեր էր. պետք էր անելի կանուխ հեռաձայնելի եւ հալը-քէֆը հարցնելի: Պատասխանեց, որ լաւ էր, շատ անելի լաւ՝ քան ինչ որ էր ակընկալութիւնս: Կատակեցի հարց տալով. «Ի՞նչ կ'ընես շատ լաւ ըլլալու համար. ըսէ՛, որ ես ալ նոյնը ընեմ»: «Դեղերուս եւ բժիշկին թելադրանքներուն հետեւելէ անելի՛ օրուան... լուրերը մտիկ չեմ ընէր», պատասխանեց կէս-կատակ: Հասկցայ դիտարկութիւնը, սակայն ըսածը քիչ մը «լուրջի առնելով»՝ հարց տուի. «Ինչպէ՞ս կրնաս առանց լուր մտիկ ընելու ապրիլ. չե՞ս գիտեր անելորտը. մարդուն տունը գող մտեր է. հայրը տղուն ըսեր է, տղաս, հարց մի՛ հաներ. ձգէ՛ որ երթայ: Տղան գանգատեր է. հայրիկ, ես զինք կը ձգեմ, ի՞նչ գիտ չի ձգեր...»:

Քիչ մըն ալ գրուցեցիք, կատակը լուրջին խառնեցիք եւ անելի յաճախ իրարու հետ կապ պահելու խոստումով վար դրիք ընկալուցները: Երբ գրոյցը քիչ մը «հանգչեցաւ» ուղեղիս մէջ, ծագեցան մտածումներ, որոնք գիտ պտոյտի հանեցին աշխարհի չորս դին. աչքիս առջեւ տարածուեցան այս կամ այն երկիրը տագնապեցնող, յուզող, մինչեւ իսկ ֆիզիքական ու տնտեսական նահատակումի տանող գարգացումներ, որոնք առերևոյթ կը թուին անկապ, սակայն եթէ մարդս թափանցե մակերեսէն վար, կրնայ ունենալ այն գագառումը, որ շատ մը գարգացումներ կարծեք թէ «կը դեկավարուին» նոյն շարժակի կողմէ, հոս-հոն կը գտնեն տարբեր բնութի դրսեւորումներ, սակայն հետեւանքներուն միջեւ նմանութիւնը ակնորէ է:

Եկե՛ք, պահ մը պտոյտի ելլենք դեպի աշխարհի տարբեր շրջանները, կատարելու համար նման փորձ: Մեր շրջապտոյտը անշուշտ չի կըրնար ըլլալ համապարփակ, հետեւաբար, ընտրենք քանի մը ուշագրաւ եւ քիչ թէ շատ մեզ՝ հայերս յուզող գօտիներ:

Սկսիք համեմատաբար տաք գօտիէ մը՝ Միջին Արեւելքէն, եւ աչքի առջեւ ունենանք Լիբանան-Իսրայել գօտիէն մինչեւ Սուրիա, Իրաք, Իրան, Թուրքիա եւ Ծոցի երկիրներ տարածուող շրջանը, մեր մտապատկերի խորքին ունենալով նաեւ մեր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը ընդգրկող Կովկասը:

Օր աւուր տեղի ունեցող դեպքերուն թուումը անելորդ է. ամերիկեան ուժերու Սուրիայէն հեռացման, թրքական թափանցումին, ռուսական «միջամտութեան», ամերիկեան ուժերու մէկ մասը Սուրիա պահելու եւ... քարիւղի հորերը «պաշտպանելու» առնչուող դեպքերը հասան նաեւ «Իսլամական պետութեան»

դեկավար Ապու Պաքըր Պադտատիի սպանութեան (չես գիտեր քանի՞ տրորդ անգամ ըլլալով), վարագոյրին յետսամասէն մեծ մասամբ դուրս բերելով վերջին շուրջ 20 եւ անելի տարիներու «գաղտնիքներ», որոնք այլապէս բացայայտ էին: Իբրեւ «կողմնակի գարգացում»՝ տեղ-տեղ ծնունդ առին տեղույն իշխանութիւններուն դեմ բողոքի յախուռն ցոյցեր: Իրաքի մէջ, բազմատասնեակ գողեր արձանագրուեցան իշխանութեան դեմ հրապարակային բողոքներու պահուն, թողութեանը կը մնայ բաց: Զիրտերու հակա-ամերիկեան տրամադրութիւնները բողոքի այլ մեկնակետ ու արտայայտութիւն ունեցան: Իրանի մէջ արձանագրուած են բազմափուլ նախընթացներ: Լիբանանի մէջ եւս պայթեցան բողոքի ցոյցեր, իրաքեական նման դրդապատճառներով:

Ժողովրդային բողոքի արտայայտութիւնները արդար՝ են: Բնականաբար՝ այո՛: Նման շարժումներ վաղը կրնան ստեղծուիլ նաեւ այլուր. Եգիպտոսի մէջ այս իմաստով քանի մը էջ արձանագրուեցաւ արդէն: Առաջին մակարդակին վրայ, ժողովրդային ցասումը հետեւանք է իշխանաւորներու չարաշահութեանց ու երկիրը հաւասարակշիռ կերպով կառավարել չկարենալուն, ապիկարութեան: Բացայայտ է, որ մարդիկ իշխանութեան կու գանկը բերուին նաեւ դուրսերը կազմաւորուած բացայայտ կամ ծածուկ ծրագիրներով, գիտեն, որ իշխանութեան վրայ մնալը կրնայ ժամանակաւոր ըլլալ, ուրեմն, նպատակ կը դնեն նախնիութեան իրենք ապահովելը: Կը ստեղծուի վիճակ, ուր նիւթական-տնտեսական-ընկերային բեռներ կը կուտակուին գանգուածի ուսերուն, եւ ահա, տեղէ մը ծայր կու տայ բողոքի ալիք մը, զոր օգտագործելու, շահագործելու պատրաստ են «դրսեցիները», ի հարկին գողաբերելով իրենց կարգ մը կամակատարները, նոր մուրհակներ դնելով իշխանաւորներու կամ յաւակնորդներու դիմաց: Եւ «յանկերգը» կը կրկնուի՝ ձեւական կամ իրական որոշ փոփոխութիւններէ ետք: (Լիբանանի պարագան իւրայատուկ գիծեր ունի, ինչպէս՝ որեւէ տեղ. կարելի է տասնամեակներ շարունակ դիրքերու վրայ մնալ, յափտենապէս վերընտրուիլ, մինչեւ իսկ որոշ դիրք-աթոռ ժառանգ թողուլ գաւակներու եւ թռուներու՝ ընտանեկան, համայնքային-թափափեական նկատումներով: Մեր նպատակը բառախաղ ընել չէ, սակայն Լիբանան այս օրերուն պիտի նշէ թայփեականութիւնը բարելաւելու տանող Թայփեականաձայնագիրին

30-րդ տարեդարձը, այն համաձայնագիրին՝ որ բարեշրջման խոստումներով գոյառած էր եւ որոշ չափով արդարացուցած՝ իր նպատակները, սակայն այսօր անոր տառէն ու ոգիէն շատ բան շոգիացած է...:

Քիչ մը անելի հիւսիս՝ կան Թուրքիոյ լարախաղացութիւնն ու բարեկամ-հակառակորդ շահագործելու փորձերը: Սուրիա թափանցումի քայլերը իբրեւ թէ կ'արդարացուին գաղթականներ տուն դարձնելու յաւակնութեամբ, սակայն անդին, Թուրքիա Եւրոպայի բարեկամներուն կը սպառնայ գաղթականներ նաեւ դեպի արեւմուտք ուղղորդելու ծրագիրներով, յիշեցնելով, որ



բազմամիլիոն տոլարի օժանդակութեան խոստումները կը մնան բաց մուրհակ: Ասդին, Լիբանանէն սուրիացի գաղթականները տունդարձի մղելու բարեմիտ քայլերը այլապէս բարեփոխութիւն բերելու իմաստով կը մնան անհետեւանք, Լիբանանի տնտեսական իրողական՝ չյայտարարուած պաշարումը կը մնայ անփոփոխ:

Ճամբորդենք դեպի Արեւելք: Չինաստանի քթին շուրջ հին-նոր մեղու մը կը թռչկոտի ամիսներէ ի վեր. անիկա կը կոչուի Հոնկ Զոնկ: Որոշ մեղաւորներ Չինաստանի յանձնելու ծանօթ որոշումը պայթեցուց բողոքի ցոյցեր, որոնք կրնան արդարացուցիչ պատճառներ ունենալ, սակայն իրողական գետնի վրայ, եւ անկախ մարդկային վնասներէն, շրջանը կրեց... Նիւթական հսկայական վնասներ. երկար ատեն գործադուլ-ցոյց ընել՝ կ'ենթադրէ աշխատանքի դանդաղում, սակայն նաեւ խանութներու, շէնքերու, ենթակառուցվածքներու կրած նիւթական անհաշուելի վնաս, որուն փոխարժեքը վճարողներ պիտի ըլլան, մեծ մասամբ՝ երկիրն ու ժողովուրդին գանձանակը, իսկ շահողները... (Կառավարիչը կին մըն է, բայց հոն «կինը փնտռեցէք» ը ի գօրու չէ):

Չինաստանի դեմ այլ խաղաթուղթեր ալ կ'օգտագործուին մերթընդ մերթ: Կան ուղղուրները եւ այլ փոքրամասնութիւններ: Կայ տնտեսական-առեւտրական պատժամիջոցներու թղթածրարը, որ օր մը կըրնայ հակաճանաչութեան դուռ բանալ, իսկ յաջորդ օրն իսկ համախիլ համաձայնութեան դրան: Կողմնակի գիծի մը վրայ, նման դռներ կը բացուին-կը գոցուին Հիւսիսային Զորեայի հետ:

Մերթ բացայայտ, երբեմն լուսանցքի վրայ հրահրում կ'ապրի Աֆղանիստանի օրակարգը: Աշխարհի յիշողութեան դուրս բերուած է, որ կար ժամանակ, երբ

Ուսամա պըն Լատէն մը եւ իր դեկավարած ծայրայեղական խմբաւորումները, «Քախտա»-ն օրակարգի առաջնահերթ նիւթ էին: Յետոյ, Պըն Լատէն չբացաւ բեմէն, սակայն «ժառանգութիւնը» ո՛չ միայն չչոգիացաւ, այլ ծնունդ տուաւ «գաւակներ» ու, որոնք տարածուեցան Միջին Արեւելքէն մինչեւ Ափրիկէ, կոչուեցան «Իսլամական Պետութիւն», «Շապապ» եւ այլ անուններով, մինչեւ այսօր ալ արիւն կը հեղուն ու տընտեսական կորուստներ կը պատճառեն Միջին Արեւելքէն, ասիական երկիրներէ մինչեւ Սուտան ու արեւմուտեան ափրիկեան երկիրներու: Խորհրդայիններուն դեմ պայքարելու համար կեանքի կոչուած Թալեպանները որակաւորում փոխեցին, ազատագրական շարժումի կոչումէն անցան ահաբեկչական-խափանարարական խմբաւորումներու ցանկին. այս խմբաւորումը երբեմն կը դառնայ ընդունելի բնակցող, յաճախ նաեւ կը մնայ դատապարտումի եւ յարձակումներու թիրախ: Թուրքիոյ դեմ արդար պահանջով կռուող քիւրտերը անմասն չեն նման խաղերէ, սորա գոյնը՝ վերջին շաբաթներուն:

Կրնանք պտոյտիլ նաեւ Եւրոպայի մէջ, բայց հոն տագնապները ունին այլօրինակ պատճառներ եւ մեքենայութիւններ:

Յատկենք ովկիանոսին միւս կողմը, հասնիք Կեդրոնական ու Հարաւային Ամերիկաներ: Ամիսներ առաջ, հոն տաք գօտի էր Վենեզուելան, ուր փորձ կատարուեցաւ իշխանափոխութեան, տեղի ունեցան բողոքի ցոյցեր, ծայր առին գանգուածային գաղթի հոսանքներ՝ դեպի դրացի երկիրներ: Հիմա, այդ տագնապը դրուած է մեղմ կրակի վրայ, Զուլայան իսկ լուսանցքայնացուած է, խոհարարները աշխատանք կը տանին Չիլիի մէջ, նաեւ կը պատրաստեն Արժանթինի եւ այլ երկիրներու խոհանոցները:

Բողոքները անշուշտ որ ունին արդար պատճառներ: Փաստօրէն, ինչպէ՞ս կարելի է պատկերացնել Վենեզուելայի եւ Իրաքի պէս երկիրներ, որոնք քարիւղի ու բնական կազի հարստութիւններու մէջ կրնան «լողալ», եւ սակայն մատնուած են սնանկութեան, ժողովուրդը զըրկուած է գործէ ու օրապահիկէ...:

Աւելի մեղմ խոհանոցներու ենթական են Զանաթան եւ Մեքսիքան, առաջինը՝ առեւտրական-քարիւղի թղթածրարներու պատճառով, երկրորդը՝ գաղթականներու եւ ոճրային խմբակներու յայտնապէս անկաշկանդ գործունէութեան պատճառներով: Սահմանին վրայ պատ կառուցողները կը պարարտանան...:

Բողոքի շարժումներն ու գաւնոնք արդարացնող պատճառներու թուումը կարելի է երկարել, ներառել նաեւ Ռուսիան, ուր ընդդիմադիրներու ձայնը երբեմն բարձր կը հնչէ եւ արձագանգ կը գտնէ այլ երկիրներու տակ, կը բարձրացուին Ուքրանիոյ-Խրիմի հարցերը, Եւրոպա հասնող քարիւղատար խողովակները բանալ-գոցելու կարելիու-

Թուրքիոյ նուրջ

Թուրք վերլուծաբանը՝ Ռուս-թուրքական ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ. «ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՐԿՈ՛Վ, ԹԵՒ ՍԻՐՈՎ»

Թուրք վերլուծաբան Ճենք Պաշլամըզը հրապարակած է ռուս-թուրքական յարաբերութիւններուն մասին ուշագրաւ յօդուած, ուր բաւական հետաքրքրական դիտարկումներ եւ կարծիքներ կը յայտնէ:

Վերլուծելով վերջին շրջանին ռուս-թուրքական համագործակցութիւնը, յատկապէս Սուրիոյ ճգնաժամի գծով՝ վերլուծաբանը խորհուրդ կու տայ չհաւատալ այն տեսիլքին, թէ Ռուսիան ու Թուրքիան պիտի դառնան ռազմավարական գործընկերներ: Անոր կարծիքով, Ռուսիա ամէն միջոցով պիտի փորձէ թուլցնել Թուրքիոյ դիրքերը:

Յօդուածին հեղինակը դիտել կու տայ, որ թէեւ թուրք-ամերիկեան լարուած յարաբերութիւններուն դիմաց ռուս-թուրքական յարաբերութիւնները օրէօր կ'ամրապնդուին, այնուամենայնիւ այդ ամէնը չի կրնար յանգեցնել այն արդիւնքին, որ երկու երկիրները դառնան ռազմավարական գործընկերներ:

Ռազմավարական գործընկերներ դառնալու համար Ռուսիան կը խանգարէ տարբեր համակարգեր, որոնցմէ մէկը պատմական դառն փորձառութիւնն է: Հեղինակը կը յիշեցնէ, որ երկու երկիրները իրենց աշխարհաքաղաքական նպատակներուն համար բազմիցս պատերազմած են իրարու դէմ:

«Ճիշդ է, եղած են պարագաներ, երբ երկու երկիրները նաեւ համագործակցած են, սակայն այդ գործակցութիւնը ռազմավարական բնոյթ չէ կրած: Երբ անոնց շահերը համընկնած են, համագործակցած են, իսկ երբ այդ շահերը անհետացած են, երկու երկիրները յայտնուած են հակադիր բեւեռներու մէջ»:

Անդրադառնալով սուրիական ճգնաժամի շրջագիծին մէջ ռուս-թուրքական յարաբերութիւններուն՝ թուրք վերլուծաբանը կը գրէ, որ ներկայիս պայմանները կը թելադրեն, որ տեղի ունենայ ռուս-թուրքական գործակցութիւն: Թուրքիան շատ լաւ կը հասկնայ, որ Սուրիոյ մէջ պայմաններ թելադրողի դերը Ռուսաստանինն է, եւ առանց ռուսական կողմին թոյլտուութեան՝ Անգարան ոչինչ կրնայ ընել: Միւս կողմէն, ըստ յօդուածագիրին, Ռուսիա կը հասկնայ, որ Սուրիոյ մէջ կայունութիւն ապահովելու համար անհրաժեշտ է Թուրքիան պահել մօտիկ եւ ինչն ո՞ւր չէ, երբեմն կատարել թրքական կողմին պայմանները, ինչպէս եղաւ վերջերս, երբ Թուրքիան քիւրտերուն դէմ զինուորական գործողութիւն սկսաւ:

«Պատկերացնենք, որ Թուրքիան իրականութեան մէջ կը հրաժարի Արեւմուտքէն. ի՞նչ պիտի ընէ Ռուսիան նման պայմաններու մէջ», հարց կու տայ հեղինակը:


Պաշլամըզի համաձայն, Ռուսիոյ ձեռնադրու չէ Թուրքիոյ եւ Արեւմուտքի միջեւ յարաբերութիւններու վերջնական վատթարացումը: Ըստ անոր՝ Մոսկուային ձեռնադրու են այն վերելքներն ու վայրէջքները, որոնք առկայ են Թուրքիա-արեւմուտք յարաբերութիւններուն մէջ:

Անոր կարծիքով, Ռուսիա որքան ալ յաւակնոտ յայտարարութիւններ կատարէ, իրականութեան մէջ կը փափաքի, որ միջազգային ներկայ դասաւորումը պահպանուի: Մոսկուան շատ լաւ գիտէ, որ չունի այնքան ներուժ, որպէսզի նորովի վերադասաւորէ աշխարհը:

«Եթէ որեւէ մէկը կը մտածէ, որ Ռուսիա գրկաբաց կը սպասէ Թուրքիոյ, կը սխալի: Կը սխալին յատկապէս անոնք, որոնք կը մտածեն, թէ Ռուսիան մոռցած է զինուորական իր օգնական ջախջախման դէպքը: Այս ամէնուն համար կան շատ պարզ պատճառներ: Ռուսիան Թուրքիան չի համարէր «իրը», ինչ որ չենք կրնար ըսել Ուքրանիոյ, Հայաստանի, Խազախստանի կամ Նոյնիսկ Ատրայէժանի պարագային: Այդ երկիրները, որոնք երկար ժամանակ մնացած են ռուսական մշակոյթին ազդեցութեան տակ, Ռուսիոյ հետ ընդհանուր անցեալ ունին: Իսկ Թուրքիան ռուսերուն համար օտար է եւ այդպէս ալ կը մնայ»:

Աղբիւր՝ Medyagunlugu

ՏՕՆԸ



Քրիստ Խոյեան

Կ'արթննաս գիշերուան պատրաստութիւն տեսնելու համար, մեծ տօնը յիշատակելու համար, կը բանաս պահարանդ ու կ'ընտրես ամենագեղեցիկը, կը հագուիս, կը գարդարուիս, կը պատրաստուիս այդ գալիքին: Ամբողջ օրը ուրախ ես, քանի վստահ ես, որ անտարակոյս գալու է այդ մէկը: Նուէրներ



կ'ամնես. նուէրներ՝ քեզի եւ հարազատներուդ: Ուրախ ես, եւ ինչպէ՞ս ուրախ չըլլաս: Ուրախութիւն կը ստանաս՝ գայն տալով ուրիշին: Ուրախութիւնը չի խլուիր, ուրախութիւնը կը տրուի, իսկ ստացողը Նոյնինքն տուողն է, ուստի հարազատներուդ նուէրները կը գերազանցեն նուէրներդ: Մեծ օր է այսօր: Յոյսի Նշոյլներ, ուրախութեան պերճանք, հարազատներով շրջապատուած անվերջ խնճոյք, քե՞ք ու ծիծաղ ամէն կողմ: Օրուան ընթացքին կը շնորհաւորես բոլորը ու բոլորը կը շնորհաւորեն քեզ փոխադարձաբար: Կը նկարուիս աչք ու ձախ, մերթափարազատներ գրկած եւ մերթ միւսակ՝ ինքզինքդ իւրայայտուկ համարելով: Երաժշտութեան ձայնը կը բարձ-

րացնես մինչեւ վերջ: Միւսակ եւ ուրախ՝ կը պարես անվերջ: Խմիչքն անպակաս՝ կը քաշես գլխուդ, կենացը կը խմես հեռու հարազատներուդ: Կը յիշես բոլոր, բոլոր անոնք, որոնք եկան ու անցան շատոնց: Բայցեւայնպէս կը մնաս ուրախ, ուրախ կը մնաս բոլորին ի տես: Ու կու գայ սլաքը սլաքին, երկուքը ցիցի պէս դէպի վեր կ'ուղղուին: Կ'աւետեն նոր օրը, որուն ամտուընէ կը սպասէիր: Նորօրուան կը սպասէիր, որովհետեւ նոր տարին 365 օրէն կու գայ, մինչդէռ նոր օրը 24 ժամէն: Նոր օրուան կը սպասէիր, որովհետեւ գայն տօնելու 365 առիթ կայ, մինչդէռ նոր տարին՝ առիթ մը 365 օր անգամ մը: Եւ ահա եկաւ քու սպասածը, ամբողջ օրը քեզ յոյս տուողը: Ահա՛, նոր օրուան առիթով կը խոստանաս ինքդ քեզ՝ ըլլալ անելի յաջողակ, անելի վճռակամ: Այո՛... Եւ այսպէս ամէն օր նոր օրը կը տօնես: Յոյսը միշտ սրտիդ մէջ, ժպիտը դէմքիդ վրայ եւ խաղաղութիւնը բովանդակ հոգիիդ մէջ: Նոր օրը կը տօնես, իսկ նոր Տարին տօնելը կը ձգես սովորականներուն:

«ՌԱ» ՈՒ «ՐԵ»...

Սկիզբ՝ էջ 9

Ռահվիրայ մըն ալ ան՝ իր կալուածին մէջ: (Վերջ)

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 4

Բայց «Ռազմիկ»ը իր մասնաւոր տեղն ունի նաեւ հայ մամուլի պատմութեան մէջ: Կրցայ ստուգել, որ այս տիտղոսով հայերէն թերթեր իրատարակուած են Պուլկարիոյ, Թիֆլիսի, Երեւանի, Փարիզի ու Պէրուի մէջ: Պուլկարիոյ «Ռազմիկ»ը քաղաքական լրագիր էր, լոյս տեսած է Ֆիլիպէ, 1905-1909, գլխաւորաբար գրագետ Ռուբեն Չարդարեանի խմբագրութեամբ: Աւելի ուշ, 1937-1944, կրկին Պուլկարիոյ մէջ, իրատարակուած է այլ «Ռազմիկ» մըն ալ, Կարօ Գեորգեանի խմբագրութեամբ ու շէշտուած ցեղակրօն հայեացքով: Իսկ Պէրուի «Ռազմիկ»ը լոյս կը տեսնէ 1983-էն ի վեր. ունի երիտասարդական ու գաղափարախօսական բովանդակութիւն: Անիկա պաշտօնաթերթն է ՀՅԴ ԼԵՄ-ի շրջանակին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ


Տեր Գրիգորեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԱՐԻՔՍ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ (ԾՆԵԱԼ ԿՈՍՏԱՆԵԱՆ)

Մահուան սուգին, որ պատահեցաւ Շաբաթ, 26 Յոկտեմբեր 2019-ին: Դանգուցեալի թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 28 Յոկտեմբեր 2019-ին, կէսօրուան ժամը 2:00-ին, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Գալէպ:



ԱՌՎԱՍՊԵՆՆԵՐՈՒ ՃԱՄԲԱՆԵՐՈՎ - 13



Յուշիկ Նազարյան

Առասպելները Հոգեբանության Մեջ

Արդեն յստակ է, որ առասպելներու աշխարհը անքակտելիորեն կապուած է մարդու հոգեկան աշխարհին հետ, մէկը միւսին բնական շարունակութիւնն ու արտացոլումն է: ԺԹ. դարուն, երբ հոգեբանութիւնը իբրեւ անկախ գիտութիւն սկսաւ զարգանալ, հոգեբաններ օգտագործեցին առասպելները՝ յատկապէս յունական դիցաբանութեան հերոսներն ու դէպքերը նկարագրելու համար: Ստորեւ պիտի ներկայացնենք զոյգ մը այդպիսի հոգեվիճակներ ու անոնց հետ առնչուած առասպելները:

Narcissism, ծայրայեղ անձնասիրութիւն

Նարկիզին առասպելը մեզի հասած է հռոմէացի բանաստեղծ Օվիտի «Metamorphosis» (Այլակերպումներ) գիրքով: Ըստ այս առաս-

ցուցամով, Նախանձոտ, ամբարտաւան ու գոռոզ, կը չարաշահէն իրենց շրջապատը, յատկապէս՝ զիրենց սիրողները, չեն ճանչնար իրենց չափն ու սահմանը եւ իրենց իրենց անձերուն վրայ այնքան մեծ յաւակնութիւն կ'ունենան, կարծէք իրենց իրենց աչքին կախարդական եակներ ըլլան: Այսպիսի անձնաւորութիւններ կարելի է դիւրաւ գտնել մեր շրջապատին մէջ, որովհետեւ, ըստ կարգ մը ուսումնասիրութիւններու մարդկութեան մէկ առ հարիւրը կը տառապի Նարկիզականութենէ: Նախընտրելի է այսպիսի անձնաւորութիւնները հեռու մնալը, որքան ալ անոնք գրաւիչ ըլլան, որովհետեւ անոնց համար զոյութիւն չունին խորունկ եւ իմաստալից յարաբերութիւններ: Նարկիզականները ընդհանրապէս զգացական գետնի վրայ անտարբեր կ'ըլլան, ուրիշին հետ զգացական կապեր չեն մշակեր եւ



պելին, Նարկիզը յոյն գեղեցիկ երիտասարդ մըն էր: Անտառի փերիներէն Էքօն (արձագանգը) կը սիրահարի անոր, սակայն յաւակնոտ Նարկիզը, ոչ միայն կը մերժէ փերիին սէրը, այլ կը ծաղրէ անոր ամեն ձայն կրկնելու ճակատագիրը: Վիրաւորուած Էքօն կ'աղաչէ սիրոյ դիցուհի Աֆրոտէին, որ իր կոտորած սրտին մխիթարանք տայ: Աֆրոտէն կը լսէ սիրով տառապող փերիին աղերսանքը եւ կ'ուղարկէ իր գաւակը՝ Էրոսը, որպէսզի պարծենկոտ Նարկիզը պատժէ: Այն պահուն, երբ Նարկիզ լիճի եզերքին ծած ինքնիր պատկերը կը դիտեր, Էրոս իր նետը կ'արձակէ անոր սրտին ուղղութեամբ եւ Նարկիզ ինքնիր պատկերին կը սիրահի, այն աստիճան, որ կը գամուի իր տեղը ու կը շարունակէ յափշտակուած դիտել ինքզինքը: Այդպէս ալ ան կը քարանայ ու կը վերածուի մեզի ծանօթ Նարկիզ ծաղիկներու, զորս կը հաւաքեն փերիները եւ կը տարածեն անտառին մէջ:

Այս պատմութենէն ներշնչուելով, հոգեբաններ ծայրայեղ անձնասիրութիւնը կոչած են narcissism, որ բառացիորէն հայերէն կը թարգմանուի «Նարկիզականութիւն» բառով: Նարկիզականութենէ տառապողները կ'ըլլան եսասէր, ինքնակեդրոն մարդիկ: Անձնասիրութիւնը անոնց մօտ անցած կ'ըլլայ բնականի սահմանները եւ վերածուած հիւանդագին վիճակի: Անոնք յաճախ կ'ըլլան

անոնց կը հետաքրքրեն միայն այն մարդիկը, զորս կարելի է չարաշահել, գոհացնելու համար իրենց հիւանդագին եսասիրութիւնը:

Փիկմելիոնի ազդեցութիւնը

Առասպելական քանդակագործ Փիկմելիոնին առասպելն ալ մեզի հասած է Նոյն վերոյիշեալ աղբիւ-



րէն: Ըստ Օվիտի, Փիկմելիոն կիպրացի հռչակաւոր քանդակագործ մըն էր, որ տեսնելով իր շրջապատի վատահամբաւ կիներուն բարքը, ուխտած էր ոչ մէկ կնոջ հետ յարաբերի: Օր մը ան կը քանդակէ աղջկան մը փղոսկրեայ արձանը, որ այնքան բնական ու գեղեցիկ էր, որ Փիկմելիոն կը սիրահարի անոր: Վե-

Շար. Էջ 12 >

ԹԱՐԹՈՒՄԻ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Նախորդ օրերուն Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը ընդունեց այցելութիւնը Հալէպ ժամանած Թարթուսի Թաղականութեան, ընկերակցութեամբ հոգեւոր հովիւ Տէր Վազգէն Զահանայ Զեօշկերեանի:

Թաղականութեան անդամները իրենց ուրախութիւնը յայտնեցին այս հանդիպման համար, շնորհաւորեցին սրբազան հայրը իր ընտրութեան առի-



թով եւ կարեւոր համարեցին նման հանդիպումներու իրականացումը՝ Թարթուսի հայութեան առնչուող հարցերու իրազեկման համար: Ապա թաղականութեան անդամները սրբազան հայրը իրաւիրեցին այցելելու Թարթուս, ծանօթանալու տեղւոյն հայութեան:

Քննարկուեցան թաղականութեան դիմագրաւած դժուարութիւնները, մտահոգութիւնները եւ ապագայ ծրագիրները Թարթուսի հայ կեանքին նոր թափ տալու առումով:

Սրբազան հայրը բարձրօրէն գնահատեց դժուարին պայմաններու մէջ տարուած աշխատանքը եւ կարեւորեց տեղւոյն հայութեան համախմբումը՝ պահելու մեր ազգային ու եկեղեցական արժէքները:

Հանդիպումին ներկայ էին նաեւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչները:

Յիշենք, որ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան յառաջիկայ Նոյեմբերի կիսուն Թարթուս պիտի այցելէ:

ԳՈՅԺ



ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքը սրտի խոր կսկիծով կը գուժէ ՀՄԸՄ-ական հաւատաւոր եղբայր, ատամաբոյժ Չաւէն Բախտիկեանի մահը, որ պատահեցաւ Կիրակի, 27 Հոկտեմբեր 2019-ին, Սպանիոյ մէջ:

Եղբ. Չաւէն ազգային կեանքէն ներս գանազան պաշտօններ վարած է: Ատենապետութեան յանձնառու պաշտօնը ստանձնած է Ազգ. Չաւարեան Վարժարանի Հոգաբարձութեան, Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի Խնամակալութեան, Հայ Ծերանոցի Խնամակալութեան, Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական Խորհուրդին, ՀՄԸՄ-ի Սկաւուտ Խորհուրդին եւ Հալէպի Վարչութեան կազմերուն մէջ:

Հանգուցեալ եղբօր հոգեհանգստեան պաշտօնը Հալէպի մէջ պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2019-ին, յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագին, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ: Յաւակցութիւնները պիտի ընդունուին յետ հոգեհանգստեան արարողութեան, Արամ Մանուկեան Ժ. Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի:

ԸՆԿԵՐԱԲԱՐՈՅԱԿԱԼ

ՀԱՆՐՕԳՈՒՏ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐ ԵՒ ՎԵՀԱՆՁՆ ԲԱՐԵԿԱՐԳԻՉՆԵՐ



Խաչիկ Շախնիսյան

Մարդկային ընկերությունները ներս փոփոխությանը իրագործումը կը համարուի բարդ եւ տագնապալի հարց մը, որովհետեւ մարդէակը բնագոյաբար կը նախընտրէ ընթացիկը, ծանօթը, ընտանին, հեզասահը, ոչ-տաղտկալին, փորձուածը, անցեալէն կտակուածը...



© Can Stock Photo - csp12753365

Մինչ տարակուսանքով կը մօտենայ ամէն երեւոյթի որ արտասովոր է, անծանօթ, անհարթ, անորոշ, տաժանելի, փոթորկոտ եւ ցնցիչ:

Ժողովուրդներու կենցաղին մէջ արմատ նետած բազում սովորութիւններ, անկախ իրենց օգտագործումէն թէ վնասակարութենէն, տրամաբանական կամ անտրամաբանական ըլլալու հանգամանքէն իբրեւ անձեռնմխելի եւ անվերատելի ժառանգութիւններ երկարատեւ գոյատեւած են զիրենք ստեղծող գաղափարներու կեանքին մէջ՝ փոխանցուելով դարե-դար եւ սերունդէ-սերունդ:

Վերադառնալով պատմութեան, պիտի նկատենք, որ կրօնական տարբեր վարդապետութիւններ իրենց քարոզչական եւ գինեալ արշաւներով յաճախ յաջողած են նուաճել շատ մը ժողովուրդներու խիղճն ու հոգին եւ փոխել անոնց հաւատքն ու կրօնը, սակայն առհասարակ ձախողած են արմատախիլ ընել կամ փոփոխութեան ենթարկել անոնց ավանդութիւններն ու սովորութիւնները: Գոյեւոր շարժումներ 2021-ին կը տեսնենք մեր երկրի մէջ, որոնք կը ստեղծեն մարդկային կրօնական փոփոխութեան հարուստ ժառանգութեան, որ մեծ գուրգուրանքով ու նախանձախընդրութեամբ պահպանուած է ժողովուրդին կողմէ՝ արժանանալով անոր անխառն պաշտամունքին, եւ որպէս մատուց կտակուելով հետա-

գայ սերունդներուն:

Այս բոլորով հանդերձ՝ վերափոխութիւնը կը հանդիսանայ մարդկային կեանքի բարեշրջման, յարաճուն վերելքի եւ ժամանակակից տարրերով պատուաստումին սատարող հիմնական ու անհրաժեշտ ազդակ մը, որ կը մերժէ ժամանակավրէպը, լճացածը, անօգուտը եւ անընդունելին:

Փոփոխութիւնը, սակայն, պատահական երեւոյթ պէտք չէ ընդունիլ, այլ՝ լուրջ, յախուռն, արկածալի եւ ճակատագրական գործընթաց մը, որ արդիւնատեւ եւ նպատակաւաց պիտի չըլլայ եթէ ենթահող չունենայ բարոյական, ընկերային, քաղաքական, տնտեսական եւ հոգեբանական հիմնահարցերու խորունկ ըմբռնողութիւնը, միաժամանակ՝ եթէ չօգտագործէ բժախնդիր եւ ճշգրիտ արժեքափեր կամ եթէ չգոյացնէ յստակ պատկերացումներ հասարակական նկրտումներու եւ նպատակաւորութեան կապակցաբար:

Բնականաբար բարենորոգումը պէտք է ընդգրկէ այն բոլոր երեւոյթները, որոնք կը խոչընդոտեն կեանքի բնական ընթացքը, կը սանձեն յառաջդիմութիւնը, չեն ներդաշնակուիր դարու ոգին հետ, գոհացում չեն տար մարդոց կարիքներուն, ճշգրտումներուն եւ ապագայ հեռանկարներուն:

Այսօր վճռորոշ դերակատարութիւն վերապահուած է ժամանակի գործօնին: Արդ՝ երկրագունդի տարածքին դէպքերու սրընթաց յաջորդականութիւնը, ինչպէս նաեւ գիտական եւ արհեստագիտական բնագաւառներէն ներս օրն ի բուն արձանագրուող հսկայաքայլ յառաջխաղացքը, վերափոխումը կը դարձնեն անյետաձգելի եւ հրատապ անհրաժեշտութիւն, որով պատեհութիւն պիտի ընծայուի մարդուն, արժանաւորապէս բարեկարգելու սեփական կեանքը՝ վերանորոգ մտածողութեամբ եւ վերաորակաւորելու կարելիութիւններով:

Որեւէ փոփոխութիւն անշուշտ միշտ ալ կը ներփակէ վտանգ, անորոշութիւն, անկանխատեսելի հետեւանքներ, անստոյգ արդիւնքներ եւ միևնույն ժամանակ ծախսողութեան:

Տարօրինակ չէ ուրեմն՝ որ քաղաքակիրթ, բայց պահպանողական շատ մը ընկերութիւններ, որոնք կը սնանին անցեալի հարստութեամբ եւ կը պարծենան իրենց կրօնական փառքերով, անելի ապահով, անելի բարեկամաստ եւ անելի խելացի կը դասեն պահպանել իրենց ներկայի կայուն եւ անխռով կացութիւնը, հեռու վանելով պատմական

Շար. 19 14

ԳԻՐԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ - 3 -

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ «ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ» ՀԱՏՈՐԸ



Լարա Արթին

Այս թիւով կը ներկայացնեմ արեւմտահայ արձակագիր Արամ Զայկազի «Երջանկութիւն» հատորը:

Շապին Գարահիսարցի գրագետը լիովին ապրելով բռնագաղթը, օտարութիւնն ու որբութիւնը (կարդալ «Քիւրտիստանի Լեռներուն մէջ» պատմածքներու հաւաքածոն) այս հատորին մէջ անջրպետ մը ստեղծելով, անցեալէն կը հեռանայ ու կը սկսի թիավարել դէպի Արեւմուտք, Նիւ Եորք: Կարճ պատմածքներով, նորարական ու պարզ ոճով դարպասներ բանալով կը ծանօթացնէ Ամերիկայի նախապաշարուները, բարքերն ու մարդիկը: Օտար միջավայրին ընտելանալու իր ջանքերը միշտ ալ գուարթախոհ շեշտով օժտուած են:

Գլխաւոր հերոսը գրողն է, որուն շուրջ կը դառնան դէպքերը: Արամ Զայկազ, լոյս արձակելով ինքն իր վրայ, կը ներկայացնէ տղուն առաջին վաստակով հպարտացող հայրը՝ «Երջանկութիւն», իր թոռներուն կեանքի ճանապարհը հարթ դարձնող մեծ հայրը՝ «Կեանքի ու Մահուան Մասին», երկու թռչուններուն կեանքին գնացքին հետեւող ու խորհող մարդը՝ «Տուն Արի», «Աշնան Մէջ Գարուն»ը ապրող ու գգացող սիրահար ասպետը, մուրացկանի մը բարեկամը՝ «Մարդը եւ Արեւահար Շունը» եւ այլն:



Արամ Զայկազի հերոսները պարզ մարդիկ են, որոնց ապրումներն ու վարքը մասնաւոր յատկանշական շնորհքով չեն օժտուած՝ լեցնել կարենալու պատմութեան էջերը: Անոնք առօրեայի խառնիճաղանձ պահերուն, կեանքի հեզասահ ընթացքին յանձնուած մարդիկ են, որոնք իրենց գգացումներուն եւ ժամանակին տերը չեն: Գրողները միշտ ալ հեղինակին կեանքէն սրընթաց անցնող ուղեւորներ են, իսկ ինք՝ մշտապէս անոնց մէջ բարին, մարդկայինն ու ազնիւը նշմարողը:

Գեղինակը ընդհանրապէս բարձր ոճի հետամուտ արձակագիր

մը չէ: Պատմութեանը մէջ գերիշխողը իր խառնութեան քաղցր ջերմութիւնն է ու պերճախօսութիւնը, որոնք անելի հարազատ ու պարզ մթնոլորտ մը կը ստեղծեն ու կը ներշնչեն ընթերցողը:

Գիրքին նախաբանին մէջ յիշուած է. «Կեանք կոչուածը երբեք ալ տեսականօրէն ուրախ կամ թաթաւուն չէ. փոխն ի փոխ ուրախ կամ վշտալի, պայծառ կամ մռայլ օրեր կը կազմեն օղակները այն շրջալիս, որ կեանք կը կոչուի»: Ուրեմն ինչո՞ւ Արամ Զայկազ իր հատորին որպէս խորագիր «Երջանկութիւն»ը ընտրած է:

Ան յոռետեսութեան, փորձանքի, վախճանին ու այլ ժխտական երեւոյթներու յորձանքին հետեւողը չէ, այլ միշտ անոնց հետ կեանքի բարիքը եւ լաւատեսութիւնը, զօդողն է ժխտականին հետ դրական յատկութիւնները մատնանշողը: Իր տողերն ու ըսելիքը յստակ են: Երեւոյթները բացատրելու համար խորը չի թափանցել կամ հերոսներ չի գծել բարդ հոգեվիճակներով: Անկումային տրամադրութիւններով չ'աւարտել իր պատմութեանը, այլ՝ հիմնորային, հաճելի տրոփութիւններով ու սրամիտ երկխօսութիւններով սոր գոյն կու տայ իր պատմութեանը: Ան մարդ ըլլալու արուեստը կը սորվեցնէ: Ընթերցողը

իր հետ քայլ առնելով կ'ապրի ու կը պտտի Գիւլիպտեմուտի շրջանը, Նիւ Եորքի Քենտրի օղակայանը, Գոլիուտի 53-րդ փողոցի կայարանը, հոյակապ բարտիններու պարտեզը եւ այլ վայրեր:

Հատորը լոյս տեսած է 1978-ին՝ իր պատկերաւոր բացատրութիւններով, տեղ-տեղ յայտնուած անակընկալներով եւ անկեղծ խոստովանութիւններով:

Հակառակ իր ապրած պատանութեան դառն օրերուն, Արամ Զայկազ կը մնայ տիպար այն արձակագիրը, որ միշտ երջանկութեամբ ու բարի հոգիով դիտած է աշխարհը:

ԲԱՌԵՐՈՒ ԳԱՆՁԱՐԱՆԻՆ ՄԷՋ - 7

«ՌԱ» ՈՒ «ՐԷ», ՌԱՅ ՈՒ ՌԱՆՉՊԱՐ, ՌԱՄԻԿ ԵՒ ՌԱԶՄԻԿ

(Բ. մաս)



Լեոն Շանոյեան

Շփոթեցուցիչ պարագայ ունին «ձերբակալել» ու «ձերբազատիլ» բայերը, որոնք թեև կու գան «ձեռք» բառէն, սակայն կը գրուին «րէ»ով, որովհետեւ կազմուած են գործիական հոլովը՝ ձեռքով եւ համապատասխանաբար՝ «կալանել» (բռնել, կապել) ու «ազատիլ» բայերէն... «Ձեռն» արմատով շինուած միւս բառերը կը պահեն իրենց ուղղագրութիւնը. - ձեռագիր, ձեռագործ, ձեռակերտ, ձեռարուեստ, ձեռնակապ, ձեռնափայտ, ձեռնառումբ, ձեռնոց, ձեռնարկ, ձեռնադրել, առատածեռն, ձեռնածու (աճպարար), ձեռնասուն (մէկու մը ձեռքին տակ սնած՝ դաստիարակուած, հովանաւորեալ), ձեռներեց (ձեռնարկու, համարձակ), ձեռնիաս (անհրաժեշտ հեղինակութեամբ օժտուած, ատակ), ձեռածիր (սպասեակներու տրուած փոքր նուէր, «պաղչիչ»), ձեռամբարձ (ձեռքերը բարձրացուցած), ձեռնադաշնակ (աքորտէն), ձեռնուիլ, ձեռնունայն վերադառնալ (ձեռքը պարտապէս վերադառնալ), ձեռնամուխ ըլլալ (ձեռնարկել), ձեռնպահ մնալ (չեզոք մնալ), առիթ ընծեռել, անձեռնմխելի անձնաւորութիւն (անհպելի), առձեռն բառարան, ձեռաց խաչ, ձեռնտու պայմաններ եւ այլն:



Եամբ յառաջացած բառը բնածայնութիւն է՝ ապա «ռ»ն կը մնայ անփոփոխ՝ կռկռալ, ճռճռալ, մռմռալ (կատուն)...

գ) «Չ»-էն առաջ միշտ «ռա» կու գայ, այլ ո՛չ թէ «րէ»: Օրինակ՝ թռչուն, հռչակ, կռռչիլ, խռչափող, պռռչտուլ: Բացառութիւն է «առջի» բառը:

դ) Ռուսիք կրկնակ «ր»ով բառեր՝ մրրիկ, անդորր, տարր, օրրան, բերրի, երրորդ, չորրորդ:

Ըսի, թէ «ռա»ով սկսող հայերէն բառարմատները թիւով չափազանց սահմանափակ են, այլեւ՝ օտարաբնուտ: Այս բառերէն մէկն ալ «ռանչպար»ն է, որ երբեմն կը գրուի «ռենչպէր» ձեւով:

Չգալի է որ օտար ծնունդ է: Մալխասեան բառարանը կը հաւաստիացնէ, որ պարսկերէնէ փոխառեալ է: Կը նշանակէ **հողագործ, երկրագործ, աշխատաւոր**: ԶՅԴ-ի քայլերգը իր առաջին իսկ տողին վրայ կը յիշէ ռանչպարը՝ իբրեւ համակիր տարր ու նեցուկ:

Սշա՛կ, բանուո՛ր, ռենչա՛ք աղբեր, Արի՛ք միանանք, յառաջ գնանք...

Այս քայլերգին բառերը գրած ու եղանակը յորինած է երգահան-խմբավար Գրիգոր Սիւնի (1876-1939):

«Ռանչպար» բառը իմ առջեւ կը բանայ գրական հորիզոն մը:

Անմիջապէս կը յիշեմ խորհրդրդահայ գրող **Խաչիկ Դաշտենցի** (1910-1974) շատ նշանաւոր մէկ վէպը (ինք նախընտրած էր կոչել «Վիպասը»), որուն մէջ բաբախուն ու կարօտալից էջերով ան կը խօսէր նախաեղեռնեան շրջանի մեր ֆետայական շարժումներուն մասին՝ Սասնոյ լեռներուն վրայ կամ Մշոյ դաշտի երկայնքին...:

Խօսքը կը վերաբերի «Ռանչպարների Կանչը» հատորին:

Խ. Դաշտենց բնիկ սասունցի էր, Սասնոյ Դաշտաղէմ գիւղէն: Եղեռնի օրերուն կորսնցուց իր ընտանիքը, հասակ առաւ Արեւելահայաստանի որբանոցներուն մէջ: 30-ական թուականներուն աչքի սկսաւ գարնել իր բանաստեղծական գործերով, սակայն անելի ու՛շ՝ համբաւ ձեռք բերաւ իբր արձակագիր, մանաւանդ

երբ 1956-ին լոյս ընծայեց «**Խողեղան**» վէպը, իր հայրենի բնօրրանին՝ Սասնոյ, կեանքէն վերցուած: Այդ լեռնաշխարհին վիճակուած ահաւոր ճակատագիրը, անոր շինական ժողովուրդին բռնագաղթը 1915-ին եւ յետոյ՝ գոյատեւելու վճռականութիւնը, նախանիւթերն էին այս վէպին:

«**Խողեղան**»ին չափ ու անելի՛ լայն արձագանգ թողուց նաեւ «**Ռանչպարների Կանչը**»: Զոս կ'երեւէին գօր. Անդրանիկն ու Գեորգ Չաւուշը, Աղբիւր Սերոբն ու Սօսէ Մայրիկը, Արաբօն, Չօլօն, Սօրուք Կարօն, գօր. Սմբատը, Փեթարայ Իսրօն, Սպաղանաց Մակարն ու Զրայր Դժոխքը... բոլորն ալ իրական մարդիկ, որոնք սակայն առասպելացած էին Դաշտենցի գրչին տակ: Տարօնի ազատագրական շարժումը վիպականացուած էր լայն պատմառի վրայ՝ ԺԺ. դարու վերջերէն մինչեւ Մեծ Եղեռն ու անելի՛ անդին՝ 20-ական թուականներ: Որքա՛ն աշխարհագրական ու ազգագրական տեղեկութիւններով յագեցած գործ էր ասիկա:

Դիւրին չէր այսպիսի նիւթեր մշակել սովետական շրջանին, երբ կարմիր գրաքննութիւնը խստաբիբ կը հսկէր հրատարակուող մէն մի տողի կամ բառի վրայ... Դաշտենց, արդէն, իր ողջութեան պիտի չկարենար հրատարակել զայն, հանդիպելով արգելքներու:

Զեղինակին կանխահաս մահէն երկու տարի ետք է միայն (1976-ին), որ «**Ռանչպարներ**»ուն մէկ մասը տպուեցաւ «**Սովետական Գրականութիւն**» ամսագրին մէջ: Յաջորդ տարի, 1977-ին, Պէրլութի ԵՏՎԱՆ հրատարակչութիւնը (Եդ. Պողպատեան) նոյնը արտատպեց առանձին գիրքով (200 էջ), դասական ուղղագրութեամբ: Արձագանգը մեծ եղաւ: Ամէն ոք հարց կու տար, թէ Դաշտենց ինչպէ՞ս յանդգներ էր գրել այս բաները...:

Այո՛, Խաչիկ Դաշտենց ի՛նչ որ գրէր՝ տուրք կու տար միայն ու միայն իր սրտի ձայնին... Շատերուն յայտնի է «**Իմ Ուղին**» խորագրով իր նշանաւոր ոտանաւորը:

Զպարտ անցայ իմ ուղին, Ձեր շարքերին խորթացած, Պաշտամունքի խորանին Ո՛չ մի պատրոյգ չվառած:

Եթէ որոշ տեղերում Մի քիչ տաք ճարպ է ծորել, Այդ էլ ես չեմ մեղաւոր, Խմբագիրներն են արել:

Դաշտենց այն համոզումն ուներ, որ «ծախու-վարձկան» գրիչներ կ'արժեզրկէն իրենք գիրքը, կը դատապարտուին պատմութեան դատաստանին առջեւ: Ի վերջոյ՝ «յարդը գնում է, ցորենն է մնում»...


Տարիներ պէտք է անցնէին՝ որպէսզի 1984-ին, վերջապէս, Երեւանի «Սովետական Գրող» հրատարակչատունը լոյս ընծայէր Դաշտենցի «**Ռանչպարների Կանչը**» ամբողջութեամբ (անելի քան 500 էջ), 50.000 տպաքանակով: Երանելի՛ շրջան՝ ընթերցասիրութեան ու գրասիրութեան տեսակետ:

Ասիկա սասունցի խրոխտ գրո-

ղին ու իր ռանչպարներուն յետ մահու յաղթանակն էր անկասկած...:

«Ռա»ով սկսող գործածական բառ մըն ալ «**ռահ**»ն է, գոր յիշած եմ վերնագրիս մէջ: Ռահ: Այսինքն՝ ճամբայ, ուղի, ճանապարհ, շաւիղ: Այս արմատէն ծնունդ կ'առնեն **ռահահորդ**-ը (ճանապարհորդ), **ռահացոյց**-ը (ուղեցոյց) ու մանաւանդ ռահվիրայ բառը, որ շատ գործածական է ու կը նշանակէ առաջամարտիկ, նախակարապետ, փոխաբերաբար՝ ջահակիր, դրօշակիր: «**Խաչատուր Աբովեան արեւելահայ գրականութեան ռահվիրաներէն մին կը նկատուի**», կը կարդանք դասագիրքերու մէջ: «**Ներսէս Շնորհալի, իր դարուն, միջեկեղեցական յարաբերութիւններու պանծալի ռահվիրայ մըն էր**», կը կարդանք այլուր:

Իսկ ի՛նչ են «**ռամիկ**»ն ու «**ռազմիկ**»ը: Չգո՛յ՛, չչփոթել զանոնք իրարու հետ:



Ռամիկը (արմատը՝ ռամ) հասարակ դասակարգի մարդն է, ժողովուրդին հասարակ խաւը: Այս նոյն արմատէն շինուած է «**ռամկավար**» բառը, որ կը նշանակէ ժողովըրդավար եւ որ անունն է հայ դասական կուսակցութիւններէն մէկուն (Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, ՌԱԿ): ՌԱԿ-ը իմաստեցաւ 1921-ին Պոլսոյ մէջ, Զայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան եւ Վերակազմեալ Զնչակեաններու (Ազատականներ) միաձուլումով: Մինչեւ 90-ական թուականներ՝ ՌԱԿ մշակութային աշխոյժ գործունէութիւն կը ծաւալէր գաղութներու մէջ, մանաւանդ իր մամուլի օրկաններով ու հեղինակաւոր խմբագիրներով:

«**Ռամիկ**»էն կու գայ անշուշտ «**ռամկօրէն**» բառն ալ, որով կը բնորոշուի աշխարհաբարի կազմաւորումէն առաջ գործածուող հայերէն ռամիկ, ժողովրդային, թրքախառն ու ոչ-յղկուած լեզուն: Չարթօնքի շրջանի մեր գրողներն ու մամուլը մեծ ճիգով մը թօթափեցին ռամկօրէնը ու ճամբայ հարթեցին պերճափայլ ու գեղեցիկ աշխարհաբարին:

Իսկ «**ռազմիկ**»ը մարտիկն է, զինուորը, պատերազմի ճակատ մեկնող տղան: Արական ընդհանրացած անուն է: Յիշե՛նք հայրենի բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանն ու թատերագետ Ռազմիկ Մարոյեանը:

Աշակերտական Անկիւն

Հայ Լեզուն

Հայերենը շատ հին լեզու է: Հայերենի գիրերը անփոխարինելի են ուրիշ լեզուներու գիրերուն հետ, որովհետեւ անոնք յատուկ են մեր լեզուի հնչիւններուն: Հայերենը ունի շատ գեղեցիկ տառատեսակներ եւ գարդագիրեր: Ես շատ կը սիրեմ հայերենը, որովհետեւ մեր մայրենի լեզուն է: Չայն պահելու համար պէտք է հայերենի դասերը լաւ սորվիլը եւ հայերեն գիրքեր կարդանք: Օտարութեան մէջ հայ ընտանիքները պէտք է իրենց գաւակներուն հետ հայերեն խօսին եւ գիրենք հայկական դպրոցներ դրկեն, պահելու համար մեր մայրենին: Ես կը փափաքիմ, որ արեւմտահայերենը չկորսուի, որովհետեւ ան հին եւ գեղեցիկ լեզու է, եւ հիմա քիչերու կողմէ կը գործածուի:

Յրայ Աշրգեան
2. կարգ

Հայ լեզուն այն լեզուն է, որ իր 38 ոսկեղէն տառերով պահեց հայ ժողովուրդը դարերու ընթացքին, հարստացուց հայկական մշակոյթը եւ գրականութիւնը: Մեր պարտականութիւնն է պահել մեզի ժառանգ ձգուած այս թանկագին հարստութիւնը, գայն մաքուր գործածել ամէն տեղ եւ ամէն ժամանակ: Բայց այս դարուն, ափսոս, հայ լեզուն վտանգուած է եւ կորուստի ենթակայ Սփիւռքի մէջ: Մենք պէտք է պահենք գայն, հայերեն խօսելով, գրելով եւ հայկական դպրոցներ բանալով:

Բարտի Լևոն
Ը. կարգ

Հայ լեզուն գեղեցիկ եւ նուրբ լեզուներէն է: Ան հնամենի լեզու է, որ մինչեւ օրս կը գոյատեւէ:

Անմասն է՝ Մ. Մաշտոցի ստեղծած 36 տառերով, երկաթագիրով, թըռչնազիրով, գրաբարով, աշխարհաբարով, իր նուրբ ու քաղցր հնչիւններով:

Հայ լեզուն գանձ մըն է, որ ժառանգած ենք մեր պապերէն: Ան կը գոյատեւէ Սփիւռքի մէջ:

Մենք պատրաստ ենք եւ պարտական հաստատուն պահելու մեր լեզուն եւ գայն անանդելու յաջորդ սերունդներուն:

Էա Պետրոսի
Ը. կարգ

ՄԱՅՐԵՆԻ՝ ԼԵՉՈՒ, ԻՄ ԱՆԳԻՆ ՀԱՅԵՐԵՆ

Ամէն ազգ ունի իր լեզուն, որ իրեն համար իւրայատուկ է: Բոլորին մէջ Հայերենը տարբեր է. ան ի՛մա է, մայրենի լեզու է: Ծովերուն, տիեզերքին ու գարնան ծաղիկներուն նման գեղեցիկ է, ոսկիի նման գանձ մըն է, փայլուն արժէք մը: Ան երկար պատմութիւն ունի, տեսակաւոր փուլերէ անցած է: Ներկայիս կը բաժնուի երկու ճիւղերու՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն: Դժբախտաբար գաղթերը դեպի օտար երկիրներ շատցեր են: Այդ պատճառով ամէն մէկ սերունդէն մաս մը հայերէն գրել-կարդալ չի գիտեր: Շատեր ալ իրենց մայրենին մոռնալով՝ կը խօսին օտար լեզուներ եւ այսպիսով կը վտանգուի մեր լեզուն: Թէեւ մենք արաբական երկիրներու մէջ կ'ապրինք եւ մեր բոլոր շուրջիները հայերէն չեն խօսիր, բայց կարելի է, որ մենք խօսինք եւ կը պահենք հայերէնը: Ինչպէ՞ս:

Իրարու հետ հայերէն խօսինք: Մեր հայերէն դասերուն առաւել կարեւորութիւն տանք, մեր ընթերցանութիւնն ու ուղղագրութիւնը գարգացնելու նպատակով՝ հայերէն գիրքեր կարդանք, համակարգիչներուն մէջ հայերէն տառեր գործածենք եւ բոլոր անոնք, որոնք օտարութեան մէջ կ'ապրին՝ չձգեն որ իրենց գաւակները մոռնան մայրենի լեզուն: Ինչպէս կ'ըսէ Սիլվա Կապուտիկեան. «Թէ մօրդ անգամ մտքիդ հանես,



- Քո մայր լեզուն չմոռնաս:
- Ան նաեւ կ'ըսէ.
- «Պահիր նրան բարձր ու վճիտ,
- Արարատի սուրբ ձիւնի պէս,
- Պահիր նրան սրտիդ մօտիկ,
- Քո պապերի աճիւնի պէս,
- Ու ոտիս գարկիցը սեւ,
- Պու պաշտպանի կրծքով նրան,
- Ինչպէս մօրդ կը պաշտպանես,
- Թէ սուր քաշեն մօրդ վրան»:

Ուրե՛մն, պահենք եւ պաշտպանենք հայերենը, որպէսզի Մերոպեան սուրբ տառերը չկորսուին մեր ծուլութեամբ: Ես հպարտ եմ, որ հայ եմ եւ բախտաւոր՝ որ հայկական դպրոց կը յաճախեմ:

Շողիկ Գաթապեան
Ը. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ ճեմարան

ՀԱՆՁՆԱԳՐՈՅ

ՀԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ. «ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՑԱՍՈՒՄԻ ԿԱՄ ՊՈՌՏԿՈՒՄԻ ՀԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ ԱՌԱՒԵԼԱԲԱՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԿԸ ՎԵՐԱԲԵՐԻՆ»

Լիբանանի մէջ ծայր առած ժողովրդային շարժումին տուն տուող պատճառներուն եւ ՀՅԴ ԿԿ-ի տեսակետներուն շուրջ յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար «Գանձասար» հարցազրոյց մը ունեցաւ Լիբանանի «Ազգակ» օրաթերթի խմբագիր Շահան Գանտահարեանի հետ: Ստորեւ կը ներկայացնենք զայն.

«Գանձասար»- Որո՞նք են Լիբանանի դիմագրաւած հիմնական դժուարութիւնները, որոնց հետեւանքով ժողովուրդը նման տարողութեամբ ցոյցերով իր պոռթկումը արտայայտեց:

Շահան Գանտահարեան- Պոռթկումի կամ ժողովրդային ցասումի շարժառիթները առաւելաբար կենցաղային հարցերու կը վերաբերին. հարկային քաղաքականութիւն, ծառայութիւններու ապաշնորհ կառավարում, էլեկտրականութեան, ջուրի եւ նման կենսական հարցերու առջնուղ անլոյծ թղթածրարներու սառած վիճակ: Կ'աւելնան նաեւ քաղաքացիական շարժումներու բարձրացումը հարցեր՝ կենսոլորտային միջավայրի վնասումներ, իրաւունքներ, եւ այլն: Բաժակին յորդեցման պատճառ դարձած գործօնները կարելի է այսպէս բանաձեւել: Իսկ քաղաքական բաժինը՝ այլ կիւրք է, որ բնականաբար իր հիմնական ազդեցութիւնը կ'ունենայ հարցերու կուտակման եւ քաղաքացիի իրավիճակին բարդացման վրայ:

«Գ.»- Ձեր կարծիքով, տարածաշրջանի քաղաքական եւ գիւտարական իրադարձութիւնները, յատկապէս Սուրիոյ պատերազմական վիճակը իրենց անդրադարձը ունեցա՞ծ են տնտեսական հարցերու բարդացման վրայ:

Շ.Գ.- Բնականաբար երկու առանցքային ուղղութեամբ սուրիական պատերազմը իր անմիջական ազդեցութիւնը կ'ունենայ. նախ Լիբանանի տնտեսութեան որոշակի կախեալութիւնը հարեան Սուրիայէն՝ գիւղատնտեսութեան ոլորտէն մինչեւ ընդհանրապէս ապրանքաշրջանառութեան ոլորտ: Տնտեսական վիճակագրական թիւերը երկու ուղղութեամբ ծաւալած գործառնութիւններու մասին այս առումով ցուցիչ տուեալներ կը փոխանցեն: Երկրորդը անշուշտ Սուրիայէն դեպի Լիբանան գաղթականներու գանգուածային տեղակայումները, որոնք բնականաբար տնտեսական յաւելեալ ծանրութիւն կը բեռնեն պետական պիտոճէին վրայ:

«Գ.»- Որո՞նք են հարցերու լուծ-

ման պատկերացումները: Ժողովուրդը յստակ կերպով բանաձեւա՞ծ է իր պահանջները:

Շ.Գ.- Բողոքարկող գանգուածը չունի ներկայացուցչական մարմին, որ լիազօրուած է բոլորին անուսով պահանջներ ներկայացնելու: Երեւոյթը մարտավարակա՞ն է, թէ տարերային. երկու ուղղութեամբ ալ վարկածներ գոյութիւն ունին: Սակայն պատկերասփիւռի պատժաւներուն առջեւ թէ ընկերային ցանցերու վրայ վանկարկումներն ու ցուցարարներուն կողմէ ներկայացուող պահանջները կը վերաբերին կառավարութեան հրաժարման, անցու-



մային կառավարութեան կազմութեան՝ բացառիկ լիազօրութիւններով, արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու կազմակերպման եւ միջամայնքային համակարգի վերափոխման:

Ասոնց կ'ընկերակցին անշուշտ ապօրինի հարստացման բացայայտումներ, դատական յատուկ նիստեր եւ պետական պիտոճէի վերականգնման պահանջներ:

«Գ.»- Որո՞նք են ՀՅԴ Լիբանանի Կեդր. Կոմիտէին տազնապէն դուրս գալու առաջադրանքները եւ ինչպիսի՞ քայլերու դիմած է ան այս ուղղութեամբ:

Շ.Գ.- Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութիւնը տարբեր առիթներու թէ՛ նախագահին, թէ՛ վարչապետին, թէ՛ կառավարութեան նիստերուն եւ թէ մամուլին յայտարարած է, եւ այդ ուղղութեամբ ալ բանակցութիւններ վարած, արտակարգ քայլերու դիմելու, ամենաարագ միջոցին անընդունելիօրէն ձգձգուած հարցերուն լուծում բերելու, աշխատաւորներու իրաւունքները ամբողջական առումով յարգելու եւ քաղաքացիներու բողոքներուն ունկնդիր դառնալով հանգուցալուծումներու առաջնորդելու կարեւորութեան մասին. միաժամանակ զգուշացնելով վարուած մթնոլորտներու մէջ ներքաշուելէ, ապահովական խախտումներ ստեղծելէ, որոնք կրնան դուռ բանալ օտար միջամտութիւններու: Կեդրոնական Կոմիտէն միշտ շեշտած է հարցերուն խաղաղ բանակցային լուծում բերելու անհրաժեշտութիւնը:

«Գ.»- Ընտրակալութիւն:

ԽԱԺԱԿ ՏԻՆՊԵՐԵԱՆ. «ՆՈՐ ԳԻՒՂ ՈՉ ԹԵ ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ ԿԱՄ ՄԱՄՆԱԳԷՏ ԶԵՌՔԵՐՈՒ ՈՒԺՈՎ ԾԱՂԿԱԾ Է, ԱՅԼ ՏԵՂԻՈՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՎԱՍՏԱԿՈՎ ԵՒ ԴԱՍՏԱԿԵՐՏՈՎ»

Լուսին Ապառնեան-Չիլոբոզեան

Հայկական ազգային կառույցները, իրենց յառաջացուցած մթնոլորտով, կարելի էր խաղացած են հայապահպանումի շանքերուն արդիւնաւորման մէջ: Մերթ ընդ մերթ լոյսին բերելու այդ կառույցներուն պատմութեան ծայքերը, հաստատման փուլերն ու յատկապէս հալէպահայութեան յետ-եղեռնեան տարիներու ինքնադրսւերման նկըրտումները, «Գանձասար» կը շարունակէ իր հարցազոյցներու շարքը, այս անգամ տխար Խաժակ Տիլպերեանի յուշերուն գանձարանը բանալով:

Տիլպերեան կը փորձէր ներկայացնել ամենէն պարզ մանրամասնութիւններն անգամ, ուրուագծելու այդ օրերուն մթնոլորտը, պայմանները, հալէպահայութեան շերտութիւնն ու ազգային գիտակցութիւնը: Ան նախ կը պարզէ Նոր Գիւղ հայահոծ շրջանի ընդհանուր դրուածքը, ազգային եռուն կեանքը, աշխատունակ բնակչութեան անկոտորում թափը, յատկապէս յիշելով իր կեանքին մէջ մեծ տեղ գրուած Ազգային Չաւարեան վարժարանի հիմնադրութեան փուլերը: Այս բոլորը արտաբերած պահուն Նոր Գիւղի բնակիչ ըլլալու իր հպարտութիւնը վառ երանգ կու տար պատումին, ձայնի ելեւելները յատուկ բարձրութեան մը վրայ պահելով:

«Նոր Գիւղի հայաբոյր շրջանը ընդհանրապէս ճանչցուած է այս մակդիրով՝ հայաբոյր, որովհետեւ Մեծ Եղեռնէն ճողոպրած մեր մեծ մայրերն ու հայրերը ատենին ամայի, անմարդաբնակ շրջանը շէնցուցին, ծաղկեցուցին, գոյն ու կեանք տուին անոր: Սոյն վայրը քսանական թուականներուն տրամադրուեցաւ հայ ժողովուրդին, որպէսզի աւանի մը վերածուի եւ դառնայ իր բնակչութեան կեդրոնը: Անշուշտ երբ կ'ընենք Նոր Գիւղ, մեր մտապատկերին մէջ կը տողանցէ այրիանոցը, որ մեծ դանկացի հայասեր՝ օրդ. Քարէն Եփիմէին շնորհիւ հետագային վերածուեցաւ: Ազգային Քարէն Եփիմէ ճեմարանի եւ անոր շուրջ համախմբուած ժողովուրդը սկսաւ կառուցել իր տնակները՝ իր կարողութեան սահմաններուն մէջ»:

Անդրադառնալով Նոր Գիւղի ընդհանուր դրուածքին, տխար Խաժակ աւելցուց. «Երբ Նոր Գիւղը պիտի կառուցուէր, ծրագրուած էր, որ ան ընդհանուր քեմիի ձեւով ըլլայ՝ տունները միօրինակ, նոյն ձեւով եւ նոյն ոճով: Այդ ձեւը, սակայն, ընդունելի չէր տեղւոյն հայութեան համար, որովհետեւ այլազան գաւառներէ եկած մարդիկ՝ այնպէս պահէր, ուրֆացիներ, խարբերոցիներ եւ այլք, ունէին իրենց հայրենի բնօրրանէն ժամանած ճաշակ ու ապրելածէ, անոր համար ալ, ժողովուրդին կամքին համաձայն ընթացք առին աշխատանքները: Այսպէս հայ ընտանիքներու տունները մէջտեղ եկան եւ շրջանը աստիճանաբար զարգանալ սկսաւ ու կոչուե-

ցաւ Նոր Գիւղ կամ Մէյտան: Այդ տարիներուն՝ 1927-ին, հիմնուեցաւ Ազգային Սահակեան վարժարանը եւ դարձաւ ձեռով մը շրջանի բնակչութիւնը համախմբող ուսումնակրթական կեդրոն մը: Անոր յաջորդեց 1930-ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հիմնադրութիւնը, գոյգ վեհափառներու՝ Սահակ Խաչատրեանի եւ Բաբգէն Կիլիսեանի օրհնութեամբ, շանքերով եւ աշխատանքով: Օրուան Առաջնորդն էր Գերաշնորհ Ս. Չաւեն Արք. Սիւրմէլեան: Նոր Գիւղը հետգիտեւ ուճանալով սովորական բնակավայրէ մը աւելի՝ եղաւ մանրակերտը հայրենիքին եւ սկսաւ ծաղկիլ: Ապա, 1936-ին, վրայ հասաւ Չաւարեան վարժարանի հիմնադրումը: Վարժարանը այս անունը կը կրէր, որովհետեւ ունէր ուղղուածութիւն եւ կազմակերպութեան անմիջական հսկողութեան ու հովանաւորութեան տակ կը գործէր: Բաժնուած ըլլալով այնպէս ցիւցիներու Կրթապիտաք վարժարանէն՝ սկիզբը Ներսէսեան, ապա Չաւարեան կոչուած էր: 1936-էն վարժարանը սկսաւ իր առաքելութիւնը եւ շրջանի ժողովուրդին ուսումնակրթական երկրորդ կեդրոնը դարձաւ»:

Խաժակ Տիլպերեանի պատումներուն ընդմէջէն վերակենդանացան Չաւարեան վարժարանին առընչուող յուշերը: Վարժարանը, այսօր, հալէպահայ աշակերտութեան թիւի նուագումին բերումով դադրած է ուսումնական կեդրոն ըլլալէ:

«Ես, որպէս Չաւարեանական, ծնած-մեծցած եմ այս շրջանին՝ Նոր Գիւղի մէջ: Չաւարեանը այդ օրերուն չունէր ներկայ դպրոց-կամոյցի տեսքը, այլ ընդարձակ տուն մըն էր, որուն սենեակները դասարաններու վերածուած էին: Որոշ դասարաններ հասնելու համար սանդուխներէն վեր պիտի բարձրանայինք, այլ դասարաններ ալ՝ 12-13 աստիճան վար պիտի իջնէինք: Այդ դասարաններուն պատուհանները գրեթէ ամաստաղին փակած էին: Դասարաններ ալ կային աւելի լուսաւոր: Շրջանի աշակերտները բնաւ չէին զգար, որ իրենք դպրոցական յարկի մը տակ կը գտնուէին, այլ՝ իրենց տան մէջ, որովհետեւ իրենց ապրած բնակարանները նոյն կառուցուածքը ունէին: Չաւարեանի մուտքի աջ կողմը գոյութիւն ունէր ընդարձակ սրահ մը, ուր մանկապարտէզը կը գործէր: Այնտեղ մասերու բաժնուած էին ծիլ դասարանէն մինչեւ ծաղիկ դասարանի փոքրիկները: Դպրոցին վերի բաժնի մըն էր գրադարան մը, որ կը գործէր արև. Ռուբէն Պարսումեանի ղեկավարութեամբ: Չաւարեան գրադարանը, 30-ական թուականներուն դարձաւ շրջանի ժողովուրդը հայ լեզուին ու գրականութեան մերձեցնող հիմնական փարոսը: Մար-

դիկ թրջախօս ըլլալով այբուբենն անգամ չէին գիտեր եւ այդ գրադարանին ճամբով, հեգելով ու կմկմալով սկսան հայ գիրին ու գրականութեան մերձեցալ, սորվիլ, սկսան «Արեւելք» օրաթերթը կարդալ, որ այդ տարիներուն արդէն կը հրատարակուէր: Զետեւաբար, երբ մարդիկ կու գան եւ կ'այցելեն շրջանը անպայման կ'ըսեն, որ Հալէպը հայկական Սփիւռքի կարելոր կեդրոնն է, Նոր Գիւղը անոր հայատրոփ սիրտն է, Չաւարեանն ալ անոր ծաղիկն է:

Նոր Գիւղի թաղերը ճանչցուած էին իրենց բնակիչներուն անուններով եւ մինչեւ այսօր ալ այդպէս ճանչցուած են: Կային նաեւ ակաւաւոր հայերու բնակարաններ»:

Խաժակ Տիլպերեան գեղեցիկ նկարագրութեամբ ներկայացուց այն խճանկարը, որ ուսումնակրթական իրայայտուկ առաքելութեամբ օժտած էր վարժարանը. «Ես յաջորդաբար երեք տնօրէններու պաշտօնավարութեան շրջաններուն աշակերտած եմ: Առաջինը Գրիգոր Էքմէլեանն էր: Անոր յաջորդեց Երուանդ Տեմիրճեանը, որուն, 4-5 տա-



րի ետք, յաջորդեց երկարավաստակ Յովհաննէս Մուշեղեանը:

Յիշատակութեան արժանի է 1962-ին, Երուանդ Տեմիրճեանի օրերուն տեղի ունեցած յուզումնալից դէպքը: Այդ տարիներուն ծնողքիս հետ ամրան արձակուրդներուն կը ճամբորդէի Լիբանան: Այնտեղ ծանօթացած էի Չարեհ Կաթողիկոսին, որովհետեւ մօրեղբայրս վարդապետ էր: Հայրս վեհափառ հօր հետ մօտէն ծանօթութիւն ունէր Հալէպի մէջ անոր առաջնորդութեան տարիներէն: Ուրեմն, 1963 թուականին, փետրուարեան անձրեւոտ ամառ տմըն էր, երբ հայրս տխուր նստած էր, դպրոցէն ներս ալ խանդավառութիւն չկար: Չանգը հնչեց եւ աշակերտները խմբուեցան: Տնօրէնը բակի ամպիոնին վրայ, խիստ կեցուածքով, իր մնայուն սեւ զգեստով, տխուր արտայայտութեամբ մը ըսաւ. «Սիրելի՛ աշակերտներ, մենք ազգովին որբացանք, որովհետեւ Չարեհ Կաթողիկոսը վախճանեցաւ»: Այդ կարծի տիպի մարդը աշակերտներուն դիմաց սկսաւ լալ: Իրեն հետեւեցան ուսուցիչներն ու աշակերտները: Այս դէպքը անջնջելի կը մնայ յիշողութեանս մէջ»:

Տիլպերեան ականջանքով անդրադարձաւ Չաւարեան վարժարանի մշակութային դերին. «Չաւարեանը միայն ուսումնակրթական կեդրոն մը չէր, այլ նաեւ ունէր 1938-ին յառաջացած Օժանդակ Մարմին մը, որ կազմուած էր դպրոցի հիմնադրութեան փուլի աշակերտութեան օրերուն: Այս Օժանդակ Մարմինին մէջ իրենց ուրոյն դերակատարութիւնը ունեցած են Ռուբէն Պարսումեանը, Չաւարեանի քարտուղար Շիթիլեանը եւ այլ անձեր, որոնք յանձնառու էին մշակութային

ձեռնարկներ կազմակերպելով առաւել հարստացնելու շրջանն ու պահելու անոր ազգային դիմագիծը: Սոյն մարմինը դարձաւ թատերական կեանքին կարելոր ներդրում բերող, գործունէ այդ մարմին մը, ապա յառաջացուց Չաւարեան թատերախումբը, որ հետագային դարձաւ միաւոր: Ամեն տարի Փետրուար ամսուն մէջ Վարդանանցը մեծ շուքով կը տօնէինք դպրոցի սրահէն ներս:

Թեւեւ Չաւարեանը չքաւոր ընտանիքներու գաւակներուն դպրոցը եղած էր, սակայն Օժանդակ Մարմինը, իր կազմակերպած հասարակարգական ձեռնարկներով, նիւթապէս նեցուկ կը կանգնէր դպրոցին: Անոր կողքին կար նաեւ Չաւարեան Միութիւնը, որ դպրոցի գրեւական եւ այլ պիտոյքները ապահովելով եւ հոգաբարձութեան օժանդակելով նեցուկ կը կանգնէր դպրոցին:

Հիմնական, բանալի աշխատանքը վստահուած էր Օժանդակ Մարմինի անդամներուն, որոնք թատերական ներկայացումներով ժողովուրդին մէջ հետաքրքրութիւն եւ խանդավառութիւն կը ստեղծէին: Վարդանանքի տարագները եւ այլ ներկայացման գոյքերը բոլորը ձեռակերտ էին եւ խնամքով պատրաստուած, շնորհիւ Ռուբէն Պարսումեանին: Վարդանանք պատերազմը իր բոլոր մանրամասնութիւններով կը բեմականացուէր:

Անոր կողքին Երուանդ Տեմիրճեանի օրերուն շաբաթ օրերը, երեկոյեան 15 օր անգամ մը մշակութային ատենամարդ անց տեղի կ'ունենար դպրոցի սրահին մէջ, ուր 4-րդ, 5-րդ եւ 6-րդ կարգի աշակերտները կը մասնակցէին վիճաբանական ասուլիսի մը: Այստեղ իրենց ձիւղեքը, սորվածները արտայայտելու առիթ կ'ընծայուէր: Այսպէս Չաւարեանը վերածուած էր ուսումնակրթական դարբնոցի, որ ինքատիպ էր: Մեծ նպաստ բերած է Նոր Գիւղի շրջանին մէջ հայ գիրի եւ գրականութեան տարածման: Նոյնիսկ այն պապիկներն ու մամիկները, որոնք լրիւ թրջախօս էին, սկսան հայերէն գիրքեր ընթերցել: Հայ մարդը կերտելու աշխատանքը ճիշդ հունի մէջ էր:

Այդ օրերուն Չաւարեանի աշակերտներուն թիւը մօտաւորապէս 350-370 կը հաշուէր: Վարժարանը ունեցած է նաեւ պարախումբ մը, որ 1975-ին սկսած էր գործել, ապա հինգ տարիներ ետք դադրած էր անոր գործունէութիւնը:

Յիշարժան են բոլոր ուսուցիչներն ու ուսուցչուհիները, որոնք իրենց ներդրումը ունեցած են հայ աշակերտի դաստիարակութեան վստահ գործին: Մինչեւ 1966 թուական բոլոր նիւթերը հայերէնով կը դասաւանդուէին, սակայն անկէ ետք արդէն փոխուեցաւ եւ արաբերէնը տիրապետեց: 1965-էն մինչեւ 1966-ի վերամուտը, երբ Չաւարեանը վերաշինութեան ենթարկուեցաւ, կարճ ժամանակի մը համար աշակերտներու տեղափոխութիւն եղաւ: մանկապարտէզի աշակերտները գէթունցիներու սրահ, նախակրթարանի աշակերտները Մարտիկեան սրահ փոխադրուեցան, իսկ դպրոցը ժամանակակից ձեւով կառուցուեցաւ:

Դպրոցը ունեցած է այցելուներ, **Հար.՝ Լջ 14**

ԽԱՉԲԱՌ (ՄՆ 318)

Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Ն Բ



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Յորդանական

- 1- 1895-ին «Դրոշակ»ի խմբագիր եղած է, իսկ 1906-ին Ա. Ահարոնյանի և Ե. Թովչեանի հետ Թիֆլիսի մեջ հիմնած «Յառաջ» և «Ալիք» թերթերը:
- 2- Անրիտ: Ս. Գրիգոր Լուսավորչի հայրը:
- 3- Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Եական բայ: Կրկնուած բաղաձայններ:
- 4- Արմտիքի չափ: Սեղմ:
- 5- Ամբողջանալ:
- 6- Լոյս արձակող աշտարակ: Ծայք:
- 7- Արժէք: Խառնատառ՝ չափի մէջ պահող:
- 8- Հակառակ՝ վիշտ: Մակաբոյժ միջատ մը: Հայկական մականուններու վերջավանսը:
- 9- Ներդոս գետին արաբական անունը: Հակառակ՝ մորթային բիծ:
- 10- Սփածանելի: Ձայնակիչ:
- 11- Իբր սպեղանի գործածուող բոյս: Եւս:
- 12- Տարի: Հակառակ՝ մարմինը մէջքէն վեր:

Ուղղահայեաց

- 1- Չոր ու կարծր իրերու իրար գարնելու ձայն: Հակառակ՝ իրարայաջորդ տառեր:
- 2- Հարսին հայրը: Արական անուն: Հակառակ՝ գտող գործիչ:
- 3- Հակառակ՝ տարածքի միաւոր: Սեփականացնել:
- 4- Յոգնակերտ մասնիկ: 660: Հակառակ՝ հարցական դերանուն:
- 5- Հակառակ՝ տառի մը հարեւանները: Հակառակ՝ 2930:
- 6- Մտապատկեր: 830: Կրկնուած ձայնաւորներ:
- 7- Հակառակ՝ շաղկապ: Հակառակ՝ յարմար:
- 8- Տատամստ ընթացք:
- 9- Անձնական դերանուն: Հակառակ՝ ելեկտրական գործիքներու նշանաւոր մակնիշ: Դատարկ:
- 10- Վայրի թագելի:
- 11- Սիամանթոյի ծննդավայրը: Հակառակ՝ երկաթբառ: Տարածքի միաւոր:
- 12- Գովելի, փառաբանելի:

ՍՈՒՏՈՒՆԵՐ (ՄՍ 317)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական և ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

7								
			8	4	3	1		
2					5	3	6	
							4	2
	4	3		9		7		
8	7			6			1	
	6	8	2					
			3	1	6			9
9		5				2	3	

Պատրաստեց Մարինա Զիւլբոշեան-Պողիկեան ՊԱՅՈՒԾ ԲԱՌ (ՄՊ 88)

Չարեհ Խրախունիի գրական ստեղծագործութիւնները շնչելով գտնւած պահուած բառը:
Պահուած բառը 12 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Խրախունիի երկերէն մէկը:

ա	տ	օ	ն	ա	կ	ա	բ	գ	հ
2	բ	է	ւ	յ	ւ	ն	է	բ	ա
է	լ	ձ	ա	է	բ	ն	ն	է	յ
դ	ա	բ	ա	է	է	ւ	ի	ն	ա
բ	վ	ւ	ւ	գ	ս	ս	դ	2	ս
ի	ն	ն	ա	ա	ա	ա	ւ	ի	տ
պ	տ	բ	ա	գ	մ	ն	ն	բ	ա
ս	ա	բ	տ	է	գ	պ	գ	ւ	ն
բ	ա	փ	է	բ	ն	ւ	ս	ն	ի
ճ	ա	բ	տ	ա	բ	ա	խ	ա	դ

«Ստուեր Եւ Արձագանգ», «Շեղբի Վրայ Ճարտարախաղ», «Քար Հայաստանի», «Ամպ Ու Աւագ Ափերուս», «Տօնակարգ», «Ես Եւ Ուրիշներ», «Ուղիներ»

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱՉԲԱՌ (ՄՆ 317)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	բ	ն	ւ	թ	ի	ւ	ն	ա	ա		
2	օ	ն	բ	ն	լ	ա	մ	մ	ա	ն		
3	ն	ա	բ	կ	ն	ի	ն	ա	ն	դ		
4	ա	հ	ա	բ	կ	ն	ւ	ն	ն	ա	բ	
5	գ	ա	բ	ա	ւ	ի	ա	օ	ւ	ա		
6	ն	ա	մ	ի	ա	ա	ն	դ	ա	տ		
7	յ	ն	ն	ա	լ	բ	բ	բ				
8	գ	ն	ւ	լ	ա	մ	ա	տ				
9		ն	կ	ա	բ	ա	պ	ի				
10	բ	ա	հ	ա	է	բ	է	ւ	ա	կ		
11	է	բ	է	լ	բ	ւ	ի					
12	մ	ա	բ	ա	ի	բ	ն	ւ	ա	ն	դ	

ՍՈՒՏՈՒՆԵՐ (ՄՍ 316)

7	6	8	2	1	9	5	3	4
2	4	9	8	5	3	6	7	1
1	3	5	7	6	4	8	2	9
8	2	7	4	9	1	3	5	6
5	9	3	6	8	7	4	1	2
6	1	4	5	3	2	9	8	7
3	7	2	9	4	5	1	6	8
9	5	6	1	2	8	7	4	3
4	8	1	3	7	6	2	9	5

ՊԱՅՈՒԾ ԲԱՌ (ՄՊ 87)

Պահուած բառը՝ «Մեռելահարցուկ»

ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՒ...

Նիւսական տօներուն, Փիկմելիոն գաղտնաբար ու ջերմեռանդութեամբ կ'աղօթէ Աֆրոստիին, որ իր յուսահատ սիրտին դարման մը գըտնէ: Տուն վերադարձին, դիցուհիին ներշնչանքով, քանդակագործը կը համբուրէ փղոսկրեայ արձանը, որ համբոյրին ազդեցութեամբ եւ Աֆրոստի միջամտութեամբ կը վերածուի իսկական աղջկայ: Երկուքը կ'ամուսնանան եւ կ'ունենան դուստր մը՝ Փաֆոս, որուն անունով ալ հետագային կը կոչուի իրենց բնակած քաղաքը:
Փիկմելիոնի ազդեցութիւնը յարաբերութիւններու այն վիճակն է, երբ մեր պատկերացումը դիմացի անձին մասին այնքան խորունկ կ'ըլլայ, որ ի վերջոյ խնդրոյ առարկան ալ կը համոզուի թէ ինք այդպէս է, ինչպէս Փիկմելիոնի հաւատքը փղոսկրեայ արձանը վերածեց միս

ու ոսկորով կնոջ: Այս երեւոյթին դրսեւորումը կը գտնենք առաւելաբար մանկավարժութեան մէջ: Օրինակ՝ եթէ երեխայի մը մասին այն պատկերացումը ունենանք, թէ ան ծոյլ է եւ անոր հետ վարուիմք այդ հիման վրայ, հետագային այդ մէկը իրականութեան կը վերածուի, նոյնիսկ եթէ երեխան իսկապէս ծոյլ չէ: Կամ ճիշդ հակառակը, դրական մօտեցումով, քաջալերանքով ու փառաքչական խօսքերով կարելի է սահմանափակ կարողութիւններու տեր երեխան յանկարծ գտնել առաջնակարգ բնույթին: Փիկմելիոնի ազդեցութիւնը կու գայ մեզի յիշեցնելու, որ մեր կանխատրամադրութիւնները չաճապարենք մարդոց արտայայտելու, անոնք կրնայ ըլլալ որ սխալ ըլլան, սակայն կրկնութեամբ տուեալ անձին կեանքին մէջ իրականութեան վերածուին: Իսկ դրական մօտեցումը, միշտ կրնայ ծաղկիլ եւ հետեւողականութեամբ ստեղծել դրական կացութիւն մը:

Պսճանկար

ԻՆՉՊԵՍ ԶՍՊԵԼ ԲԼՐԿՈՒԹԻՒՆԸ ՎԷՃԻ ԸՆԹԱՑՔԻՆ



Խոյ

Կարելիությունը ունիք բարձունքի հասնելու: Դուք չէք վախճար դժուարություններն, պիտի իրականացնեք ձեր մտածածը:



Ցուլ

Մտերիմները կ'օգնեն յաղթահարելու դժուարությունները: Անոց կարելի է դիմել խորհուրդներ ստանալու համար:



Երկուորեակ

Ամեն ինչ յաջող պիտի ընթանա այս շաբաթ: Նոր գաղափարներ պիտի ծնին: Շաբաթը բացառապես արդիւնատու է:



Խեցգետին

Դուք կը փորձեք օգնել անոց, որոնք կը յայտնուին դժուար կացութեան մէջ: Կարելիությունը ունիք լուծելու նիւթական հարցեր:



Առիծ

Չգացումները յաճախ կը խանգարեն ձեզ կեդրոնանալու ձեր գործերուն վրայ եւ սկսածը աւարտին հասցնելու:



Կոյս

Շաբթուան երկրորդ կիսուն հետաքրքրական եւ գայթակղիչ առաջարկներ պիտի ստանաք, ինչպէս նաեւ գաղափարներ յղանաք:



Կշիռք

Շաբթուան երկրորդ կիսուն ձեր ընկերային յարաբերություններուն մէջ հարցեր պիտի ծագին, որոնք սակայն յաղթահարելի պիտի ըլլան:



Կարիճ

Դժուար եւ լարուած Շաբաթ է: Յաճախ ձեր ցանկությունը իրականութեան հետ կը շփոթեք, ինչ որ սխալներու պատճառ պիտի դառնայ:



Աղեղնաւոր

Այս շաբաթ դժուարություններ պիտի յառաջանան, բայց դուք պիտի չյուսահատիք, նոյնիսկ եթէ ամեն բան ձեր ծրագրածին պէս չընթանայ:



Այծեղջիր

Ձեզի կը սպասէ շատ գեղեցիկ եւ բարենպաստ շաբաթ մը: Ընկերային լաւ յարաբերություններ պիտի մշակեք այս շաբաթ:



Ջրիս

Բարենպաստ շաբաթ մըն է տնտեսական ծրագիրներու համար: Դուք դիւրաւ լեզու պիտի գտնեք մարդոց հետ, որոնք պիտի օգնեն իրականացնելու ձեր ծրագիրները:



Ձուկ

Յաճախ մակրուքներու պատճառով կը գայրանաք ընկերներէ: Համբերատար եղէք եւ կարելիություն մի՛ ընծայեք տարածայնություններուն:

Խորունկ շնչել ու արտաշնչել

Վեճերու ընթացքին հանգստությունը պահպանելու կարողությունը կապուած է լիցքաթափելու ձեր կարողութեան հետ յատկապէս: Քանի մը անգամ մակերեսային, ոչ-խորունկ շունչ քաշելը օրկանիզմին պատասխան արձագանգ է ճնշուած հոգեվիճակին: Անյարմար կացութիւններու չմատուցելու համար պէտք է փորձել խորունկ շնչել, որուն շնորհիւ ալ ուղեղը կը սկսի աւել



լի սթափ աշխատիլ: Փորձեցէք խորունկ շնչել բերնով, իսկ արտաշնչել քիթով: Այդպիսով դուք կըրնաք դադարեցնել ճնշուածութեան հորմոնները՝ օրինակ ատրենալինին ու քորտիզոլին արտադրությունը:

Ուշադրութիւն Դարձուցէք ձեր մարմնին Կրած փոփոխութեան

Եթէ կեդրոնանաք վեճի ընթացքին յառաջացող մարմնային զգացողութեան վրայ, կրնաք գայն փոխել: Երբ մարդուն ուշադրութիւնը կեդրոնանայ իր մարմնին վրայ, ան կրնայ զգալ իր լարուածութիւնը, մակերեսային շնչառութիւնը եւ այլն: Երբ նկատեք որ ձեր մարմինը գերլարուած է՝ փորձեցէք ըստ կարելոյն թուլցնել ձեր ձեռքերն ու մկանները ընդհանրապէս: Նման դիրքը ցոյց կուտայ ձեր հանգստութիւնը, ինչ որ կ'օգնէ շըրջանցելու լարուածութիւնը:

Ուշադիր Մտիկ Ըրէք

Մարդուն բնորոշ է վեճ սկսիլ այն պարագային, երբ կը զգայ, որ գրուցակիցը մտիկ չ'ըներ իրեն: Վեճը շրջանցելը բաւական դժուար է, եթէ դուք մտիկ չէք ըներ ձեզի ըսուածը: Փորձեցէք ձեր ուշադրութիւնը կեդրոնացնել ձեր գրուցակիցին ըսածներուն վրայ: Մի՛ ընդհատեք զինք ձեր մղտքերով ու դիտողութիւններով: Դուք կրնաք ձեր միտքը արտայայտել ձեր գրուցակիցին մտիկ ընելէն ետք միայն:

Փորձեցէք յստակ Հարցումներ ուղղել

Յստակ հարցումներ ուղղելը շատ կարեւոր է, եթէ կը փափաքիք վերջ տալ վեճին: Ատիկա ցոյց կու տայ, որ դուք ուշադիր մտիկ կ'ընէք ձեր գրուցակիցին եւ կը յարգեք զինք: Հարցուցէք օրինակ, թէ ինչո՞ւ այդպէս կը մտածէ, ի՞նչ է պատճառը եւ այլն: Ուշադրութեամբ ընտրեցէք ձեր արտասանած բառերը եւ ուղղած հարցումները:

Ցած ձայնով խօսեցէք

Ձայնի բարձրութիւնն ու երանգը կապուած են գարկերակային ճնշումին հետ: Եթէ ձեր ձայնը բարձր է, դժուար կը դառնայ հասկնալ ձեր ըսածին իմաստը: Փորձեցէք մեղմացնել գրուցակիցին բարկութիւնը եւ մեղմ ձայնով խօսիլ: Միայն այդպէս կարելի է հանգստացնել զինք

ՊՏՈՒՂՆԵՐՈՎ ԴԻՄԱԿՆԵՐ՝ ԱԶՔԵՐՈՒՆ ՇՈՒՋ ԳՏՆՈՒՂ ՄԱՇԿԻՆ ՀԱՍԱՐ

Ազքերուն շուրջ գտնուող մաշկը բաւական զգայուն է: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է օգտագործել իւրայատուկ դիմակներ, որոնք կարելի է պատրաստել իւղերով, եւ պտուղներով: Պտուղներով դիմակները բաւական օգտակար են, քանի որ մաշկը կը սնուցանեն կենսասիւթերով եւ այլ օգտակար նիւթերով:

Կ'առաջարկենք երկու դիմակ, որոնք կարելի է կիրառել տարուան բոլոր եղանակներուն:

ՊԱՆԱՆՈՎ ԴԻՄԱԿ

Անհրաժեշտ բաղադրիչներն են՝ կէս պանան, մէկ թէյի դգալ սեր եւ մէկ թէյի դգալ բուսական իւղ:



Պանանը հարիչէ անցընել եւ խիւսի վերածել՝ աւելցնելով իւղն ու սերը: Պատրաստուած զանգուածը կարելի է քսել այքերուն շուրջը գըտնուող մաշկին վրայ, իսկ 15-20 վայրկեան վերջ դէմքը լուալ:

ՆԱՐԻՆՋՈՎ ԴԻՄԱԿ

Անհրաժեշտ բաղադրիչներն են՝ մէկ մեծ նարինջ (կարելի է փոխարինել երկու մեծ մանտարիկով), մէկ թէյի դգալ մեղր, մէկ հաւկիթի դեղնուց եւ մէկ ճաշի դգալ ձիթապտուղի ձեթ:



Նարինջի (կամ մանտարիկներու) հիւթը քսել եւ լեցնել մեղրին մէջ՝ աւելցնելով հաւկիթի դեղնուցն ու իւղը: Բոլոր բաղադրիչները լաւ մը խառնելէ ետք, պատրաստուած զանգուածը քսել մաշկու մաշկին վրայ: 15 վայրկեան ետք, դէմքը լուալ տաք ջուրով՝ առանց օճառ օգտագործելու:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈՂԵՐԸ...

Սկիզբ՝ էջ 5

թիւները: Ռուսիոյ հետ աղերս ունեցող գոտիներ են, ինչպէս նշեցինք, Միջին Արեւելքը, Կովկասը եւ Ծայրագոյն արեւելքը, ուր կան նաեւ Չինաստանի, Զորեաներու եւ Ծափոնի գործակալները: Կարկինը կարելի է տարածել նաեւ դէպի Աֆրիկէ եւ այլուր: Օրինակներ թուելը կը նկատենք աւելորդ: * * *

Կրկնենք. շարք մը երկիրներու մէջ տնտեսական-ընկերային եւ յարակից տագնապներու պատճառով բարձրացող բողոքի ակիցները արդար են եւ ունին հիմնաւորող պատճառներ, խորքին մէջ՝ պաշտօնի դիրքի շահագործում, արտաքին կողմերու շահերուն ծառայելու կամ դէմ դնելու ուղիները:

Տեղական, նեղ օղակներու մէջ հարցերը դիտելու-ընկարկելու ընտրանքներուն գուգահեռ, կան նաեւ այլ գործակալներ, որոնք թէեւ ի գործունէ վերջը յիշատակուած բոլոր ոլորտներուն եւ էջերուն վրայ, սակայն կարելի է արհամարհել գաւնոնք, պէտք է հաշուի առնել այդ գործակալները եւս, մասնաւոր եթէ աշխարհը դիտենք տարածքի ու ժամանակի աւելի ընդարձակ օղակներու մէջ:

Մանրամասնելով՝ խօսինք գոնէ վերջին 30-35 տարիներու ժամանակահատուածին դիտարկումով, այսինքն, սկսելով այն օրերէն, երբ Խորհրդային Միութիւնը սկսաւ փլուզուիլ եւ ի վերջոյ, անցաւ պատմութեան: Պերլինի Պատը փուլ եկաւ, Արեւելեան Եւրոպայի երկիրները դուրս ցատկեցին Ռուսիոյ ազդեցութենէն, ոմանք ծայրայեղօրէն յարեցան Արեւմուտքին, Վարշաւայի Ուխտը դադարեցաւ գոյութիւն ունենալ: Ինչպէս դար մը առաջ, ցարական կայսրութեան փլուզման օրերուն, նոյնպէս այլ յիշեալ ժամանակաշրջանին, Ռուսիոյ ազդեցութիւնը զգալի նահանջ արձանագրեց: (Գորբաչովի նպատակը այդ էր, սակայն իրողական աշխարհը տարբեր տեղ էր կրնար առաջնորդել): Յաջորդ տասնամեակներուն, մասնաւորաբար Պորիս Ելցինի չքացումէն ետք, Ռուսիա ձեռք առաւ սուրը՝ իր նախկին ազդեցութեան գոտիները վերանուաճելու համար, բեմ եկաւ տնտեսական եւ այլ գիտակցութիւններու մարմնաւորումով:

Փլուզման օրերուն, օրինակի համար, Միջին Արեւելքի եւ մասնաւոր իրաքը ներառող Ծոցի գոտին մէջ ստեղծուեցաւ «պարապութիւն» մը (նման պարապութիւններ ստեղծուեցան նաեւ Կովկասի մէջ եւ այլուր): Զաղաքական-ռազմավարական բեմերը պարապութիւն չեն հանդիսանում: Արեւմուտքը թափանցումներ կատարեց ի հեճուկս ռուսական ազդեցութեան, հակառակ անոր, որ ՆԱԹՕ-ն խոստացած էր «ճենթըմէն»ի պէս վարուիլ փլուզուած կայսրութեան հետ...: Ներկայիս, ակներեւ է ռուսական հզօրանքին վերականգնումը, վերաթափանցումի յստակ ճիգը՝ դէպի տասնամ-

եակներ առաջ կորսուած գոտիներէն ներս: Ամենէն ուշագրաւ օրինակը եղաւ Խրիմի պարագան, իսկ վերջերս՝ մինչեւ Թուրքիոյ, արաբական Ծոցի եւ Աֆրիկեան երկիրներ ձեռք երկարելու քայլերը: Կովկասի պարագան նոյնքան ծանօթ է:

Ռուսիա իր հզօրանքը չի վերականգնել փլուզուած կայսրութեան նախատիպով, այլ մասնակից է վերածնունդին ռազմավարական-տնտեսական-ամբարձրական աշխարհը բաժնեկցելու նորագոյն «արարողութեան»: Գաղտնիք չէ նաեւ, որ մագնիսական դաշտերը միայն երկու բեւեռով չեն շարժիր այսօր. Միացեալ Նահանգներու, դաշնակիցներուն (որոնք երբեմն սուր մրցակից ալ են...) կողքին, բաժնեկցութեան մրցումին մասնակից են Ռուսիան, Չինաստանը, որոշ չափով նաեւ Ծափոնը եւ այլ ուժեր: Պետք չէ մոռնալ, թէ Խրաքանչիւր խմբաւորումի ներսիդին կան «ենթա-ուժեր», որոնք կրնան շահակիցներ որոնել-գտնել այլ խմբաւորումի մը ներքեւ, առերեւոյթ անոր հանդէպ հակառակորդի դեր խաղալով...: Զոն է որ կը գտնուին լծակները շարժող աներեւոյթ ձեռքերը: Միացեալ Նահանգները Ռուսիոյ, Ուքրանիոյ, մինչեւ իսկ Չինաստանի եւ այլոց գուգորդող-հակադրող գիծերուն վրայ ակներեւ դարձած են այդ «ենթա-ուժերը»: Այսպիսի իրականութեան մը գիտակցումը կը դիրացնէ բացատրութիւնը այնպիսի շարժումներու, որոնք անվիճելիօրէն արդար մեկնակետեր ու դրոպապատճառներ ունենալու կողքին, կը «հովանաւորեն» Զոնկ Զոնկի, Լիբանանի եւ այլ «տկար օղակներ»ու մէջ ինկող երկիրներու շարժումները: Այլապէս, ինչպէ՞ս բացատրել, օրինակի համար, որ ապրուստի ծանր եւ իրական բեռներու տակ ճնշուած լիբանանցիք (նաեւ ուրիշներ), օրեր ու շաբաթներ շարունակ գործ-բան ձգած՝ ճամբաներ փակեն, տնտեսական տագնապը գործնապէս աւելի խորացնեն...: «Արդէն «գործ չկայ»ի իրականութիւնը բացատրութիւն չէ: Փաստօրէն, կան ցուցարարները կերակրողներ ու անմիջական պետքերը հոգացողներ, զանոնք կառավարութեան ու որոշ ղեկավարներու դէմ ոտքի հանելէ անդին՝ որոշ ուժեր նսեմացնելու եւ քաղաքական-ռազմավարական բեմէն հեռացնելու դիտաւորութիւն ունեցողներ կան: Տագնապի բեռներուն տակ կքած ժողովուրդը իրաւունք ունի այս բոլորը չտեսնելու եւ երկրորդական նկատելու, ինչպէս որ կ'ընէր... մօտաւորապէս 30 տարի առաջ վերջ գտած «քաղաքացիական պատերազմ»ի 15 տարիներուն: (Այսօր ո՞վ կը յիշէ-կը յիշեցնէ այդ փուլը եւ իր բազմերես արհաւիրքները: Զասակ առած է սերունդ մը, որ ծանօթ է «պատերազմ» հասկացութեան. ու պէտք է գայն գերծ պահել մոռցուած փորձութեան մէջ իյնալու վտանգէն, որպէսզի չկրկնուին 1958-ը, 1975-ը, «Արաբական գարուն»ին մէկ նոր տարբերակը չհասցուի Լիբանան, եւ ո՞չ միայն Լիբանան):

Պետք չէ մոռնալ ու անտեսել մանաւանդ այնպիսի իրականութիւններ, որոնք արձանագրուած են մինչեւ իսկ Աշխարհամարտի օրերուն՝ հակամարտութիւնները շահագործող եւ ազդեցութիւն ու հարստութիւն կուտակողներու «շուկայական» տրամաբանութեամբ: Օրինակի համար, վերջին տասնամեակներուն, յաճախ խօսուած է այն շահակցական գործակցութեան մասին, որ Պուշ Ընտանիքն ու նմաններ ունեցած են նաեւ զանազան Գերմանիոյ հետ, պատերազմէն առաջ ու անոր առաջին տարիներուն, նաեւ՝ աւարտէն ետք: Այլ օրինակ մը. Սատտամի դէմ պայքարելու համար Իրաք գործուողուած ամերիկացի նախկին պաշտօնակատարներ հիմա սկսած են աւելի՞ համարձակօրէն բացայայտել այն շահադիտական նպատակները՝ որոնք պատճառ դարձան Իրաքի գրաւումներուն, իշխանափոխութեան եւ... քարիւղի հարստութեանը ցայսօր շարունակուող կողոպուտին:

Արդար ընդգուգումի իրական պատճառները յարգելի են, իսկ անոնց չարաշահումը եւ բողոքողներուն կամքէն անկախ՝ այլ նպատակներու կառքին լծումը կը մնայ հին խաղին մէկ մասը, ո՞չ միակը: ...Բարեկամս իրաւունք ունի լուրերը մտիկ չընելու, սակայն գողերը մեր օձիքը չեն ձգեր, մինչեւ իսկ եթէ թոյլ տանք, որ հեռանան:

ՀԱՆՐՕԳՈՒՏ...

Սկիզբ՝ էջ 8

իրադարձութիւններ վերծանելու, անցեալէն դասեր քաղելու եւ ապագայի կերտման ի խնդիր երկարաշունչ, տաժանակիր եւ փորձաւոր աշխատանքի ձեռնարկելու արկածախնդրութիւնը:

Սակայն իրականութեան մէջ մեծագոյն վտանգը կը սպառնայ այն ժողովուրդներուն, որոնք ծանօթ չեն մերդարեայ արդի մտածողութեան, վարակուած չեն ժամանակակից նորարար շունչով, նաեւ քայլ չեն պահեր յարատեւօրէն ծաղկող ու բարգաւաճող աշխույժ ընկերութիւններու հետ: Մասնաւոր այս օրերուն՝ երբ այդ համաքայլ ընթացքն ու մօտեցումը դարձած են կենսական նախապայմաններ ճակատաբացօրէն գոյատեւելու այն հաւաքակալութեանը մարքին, որոնք համար վերափոխումը կը նկատուի անշրջանակելի եւ յոյժ եական միջոցառում՝ հասնելու համար դէպի լուսաւոր ապագայ սուրացող համաշխարհային կառախումբին:

Զաւանաբար շատեր նախապատիւ սեպեն կառչած մնալ անցեալին եւ անտեսեն՝ վարդագոյն ապագայի խոստումնալի կոչը, մեկնելով այն վարկածէն, որ որեւէ արդիւնարար բարեշրջում կ'ենթադրէ անընկճելի կամք, անսպառ կորով, հետեւողական ճիգեր, բազում գոհողութիւններ, ու մասնաւորաբար՝ համակողմանիօրէն ծրագրուած խստաբարոյ, եռանդուն եւ բեղմնաւոր գործելաձեւ, որոնք անմիջականօրէն տրամադրելի չեն իրենց:

Այսպէս՝ վերոյիշեալ հանգամանքները կը թելադրեն մեզի չվախնալ եւ չխուսափիլ վերափոխումի ջահակիրներէն՝ ոչ ալ կործանարարներ ու դաւաճաններ որակել գա-

նոնք, այլ՝ առանց վերապահութեան քաջալերել, մեծարել ու գնահատել այդ խիզախ մարդիկը, որոնք անընդմէջ կը ճգնին յեղաշրջել եւ բարոյքել ժողովուրդներու հետեւողականօրէն տժգունող միապաղաղ կեանքը: Որովհետեւ՝ փոփոխութիւնը ի վերջոյ շարժում կը նշանակէ, իսկ շարժումը կեանք կը բովանդակէ, մինչդէռ՝ անշարժութիւնն ու լճացումը մահուան ամենացայտուն ցուցակիշներն են:

Ուրեմս՝ անվարանօրէն ողջունենք եւ խրախուսենք մարդկային կեանքի վերափոխման եւ բարեշրջման հեռանկարով յանդուութեամբ ձեռնարկուած այլաբնոյթ հանրօգուտ նախաձեռնութիւնները, ինչպէս նաեւ անշահախնդրօրէն հասարակութեան դատին նուիրուած բոլոր վեհանձն բարեկարգիչները, եւ այդ՝ տեւաբար գորակցելով ու հնարաւոր բոլոր միջոցներով օժանդակելով անոնց:

ԽԱԺԱԿ...

Սկիզբ՝ էջ 11

որոնցմէ են Սիլվա Կապուտիկեանը, մեծ գործարար Ծորճ Մարտիկեանը, որուն անունով կոչուած էր Նոր Գիւղի Մարտիկեան շէնքը:

Վարժարանը շրջանաւարտ փայլուն հունձքեր տուած է հալէպահայութեան: Անոնցմէ են Երեսփոխան Սիմոն Լիպարեան եւ հայերեսաւանդ ուսուցչուհի Ալիս Գաթըրճեան: Մօրս ուսանողութեան շրջանին՝ քառասունականներուն սկիզբը, Չաւարեանի մէջ հայերէնի դասատու եղած է Անդրանիկ Ծառուկեանը:

Տիպերան կը հաստատէ, որ Նոր Գիւղի հայկականութեան նորագոյն մէջ դեր ունեցած են նաեւ այլ կառոյցներ:

«Նոր Գիւղի մէջ կը գտնուէին Զաւախի հիմնական կառոյցները՝ Ազգային Ծերանոցը, Կիւլպէնկեան մայրանոցը, Մարտիկեան սրահը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Ազգ. Սահակեան եւ Չաւարեան վարժարանները, Ազգային Զարէն Եփփե Ծեմարանը, սրճարան Սահակը, որ գաղափարական-մշակութային կեդրոնատեղի մը եղած էր, Նաւասարդեան դաշտը եւ այլ կառոյցներ:

Այս բոլորին ծաղկունքին մէջ մեծ էր շրջանի բնակիչներուն դերը: Անոնք հաւատացած էին դպրոցի առաքելութեան: Այդ կառոյցները ոչ թէ որմնադիրներու կամ մասնագէտ ձեռքերով կառուցուած են, այլ ժողովուրդի վաստակով եւ անոր ձեռքին ուժով կանգնած են: Ժողովուրդը իր առօրեայ գործէն ետք անմիջապէս կը փութար շինարարական աշխատանքներու, նոյնիսկ յոյ կիներ իրենց ներդրումը կը բերէին: Եւ այսպէս՝ գեղեցիկ միախառնուած աշխատանքով Նոր Գիւղը դարձաւ սփռնաբարձիկութեան գարկերակը: Երբ կը շրջէր Նոր Գիւղի շրջանին մէջ, անկարելի էր չարբենալ իւրաքանչիւր բնակարանէն բուրոզ յասմիկի եւ վարդի բոյրով»:

Շնորհակալութիւնս յայտնելով բաժնուեցանք տիար Կաթակ Տիպերեանէն, յուսալով որ անցեալին թափած հսկայական ճիգերուն վերջիջումը յետպատերազմեան շրջանի վերականգնումը խթանող ազդակ պիտի հանդիսանայ:

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՏՐՆԸ

-Սուրիոյ ֆուտբոլի հաւաքականի նախկին խմբապետ Ֆիրաս ալ Խաթաթիպ Նշանակուեցաւ Բուէյթի Սալիմիէ խումբի փոխմարզիչ:



-Սուրիոյ պասքեթի նախագահի բաժակի տողը մրցումներու շրջագիծին մէջ, ՀՄԸՄ-ի պասքեթի տողը կազմը 55 - 86 արդիւնքով գիջեցաւ յաղթանակը Հունգարիայի:

-Սուրիոյ ֆուտբոլի փոխմարզչական երկրորդ փուլի մրցումներուն, Հայկաի Իթթիհատը 1-0 արդիւնքով պարտութեան մատուցեցաւ Թարթուսի ալ Սահել խումբին:

-Անթուան Ըթթէ ընտրուեցաւ Ճալայ-ի Նորընտիր վարչութեան ատենապետ, իսկ Իթթիհատի եւ Հունգարիայի ակումբներու անդամական ընդհանուր ժողովները չշարունակուեցան անդամներու պահանջուած թիւին չյառաջանալուն հետեւանքով:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՍԻՄՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԵՒ ԱՍՄՈՒԷԼ ԳԱՍՊՐՈՒՆԻ ԴԱՐՁԱՆ ԵՐՈՂՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՐՔԱՆԻ ԱՆՂԱՍ

Սիմոն Մարտիրոսեան դարձաւ Եւրոպայի մինչեւ 23 տարեկաններու ախոյեան: «Արմենփրէս»-ի համաձայն, Պոլիարեստի մէջ ընթացող Եւրոպայի երիտասարդներու առաջնութեան գերծանութեան կարգի մրցումներուն, Մարտիրոսեան նախ բարձրացուց 192 քկ., ապա երկրորդ մտեցումին չկրցաւ բարձրացնել 198 քկ., բայց երրորդին բարձրացուց 198 քկ., որ արդէն նոր թուանիշ էր:

Այսպիսով Մարտիրոսեան դարձաւ ոսկի մետալակիր: Այնուհետեւ իրումի վարժութեան յաջորդաբար բարձրացուց 231 քկ., 236 քկ.,



սակայն ձախողեցաւ 242 քկ. բարձրացնելու: Հրումի վարժութեան հայ մարզիկը դարձեալ արծանացաւ ոսկի մետալի: Երկամարտի 434 քկ. արդիւնքով Սիմոն Մարտիրոսեան դարձաւ մինչեւ 23 տարեկաններու Եւրոպայի ախոյեան: Աւելցնենք, որ Սիմոն Մարտիրոսեան Ռիօ տէ Ժանեյրոյի 2016 թուականի

ողումպիական խաղերու արծաթէ մետալակիր է, ինչպէս նաեւ Աշխարհի եւ Եւրոպայի կրկնակի ախոյեան: Նոյն մրցաշարքին երկրորդ ներկայացուցիչը՝ Հայաստանի հաւաքականի անդամ Սամուէլ Գասպարեանը արծանագրեց տակաւորիչ արդիւնք: Գասպարեան՝ 109 քկ. ծանրութեան մարզիկներուն կարգին նախ բարձրացուց 168 քկ., ապա 172 քկ. եւ 176 քկ. եւ նուաճեց արծաթէ մետալ: Հրումի վարժութեան գլխավոր պահեց 207 քկ. եւ 214 քկ.՝ նուաճելով ոսկի մետալ: Երկամարտի 390 քկ. արդիւնքով Սամուէլ Գասպարեան դարձաւ մինչեւ 23 տարեկաններու Եւրոպայի ախոյեան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼԸ ԾԻԳ ՊԻՏԻ ԹԱՓԵ ԶԵՈՔ ԲԵՐԵԼՈՒ ՄՊԱՊԵՆ

Սպանիոյ ՌԵԱԼ Մատրիտը մտադիր է յառաջիկայ ամառ պայմանագիր կնքել Փարիզ Սան Ժերմանի յարձակողական խաղացող Կիլիան Մպպպէի հետ:

Այս մասին տեղեկութիւններ հաղորդեց El Mundo Deportivo-ն: Ըստ կայքէջին, 20-տարեկան խաղացողը դարձած է «Արքայական ակումբի» գլխաւոր թիրախը: Յաջորդ ամառ անոր համար մայրաքաղաքի ակումբը պատրաստ է Մպպպէին համար տրամադրել 300 միլիոն եւրո: Սպանական ակումբը պիտի օգտագործէ Մպպպէի եւ Սան Ժերմանի մարզիչին՝ Թիէրիի միջեւ անկայուն յարաբերութիւնը:



ՊԱՐՍԵԼՈՆԱՆ ՊԻՏԻ ԶԵՐԿԱՐԱԶԳԵ ՎԱԼՎԵՐՏԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ


Սպանական AS օրաթերթը Պարսելոնայի խումբի գլխաւոր մարզիչ Էրնեստո Կալվերտին մարզական իր վերջին մրցաշրջանը կը բոլորէ: Քաթալոնական ակումբը պիտի չերկարաձգէ պայմանագիրը 55-տարեկան



սպանացի մասնագետին հետ: Պարսելոնան նկատի առած է Հոլանտայի հաւաքականի գլխաւոր մարզիչ Ռոնալտ Բոսմանի եւ հոլանտական «ՊՍՎ Էյնտհովենի» գլխաւոր մարզիչ Մարկ վան Փոմբելի թեկնածութիւնները: Կալվերտիի գլխաւորութեամբ Պարսելոնան

երկու տարուան ընթացքին նուաճեց 4 տիտղոս՝ երկու անգամ արծանանալով Սպանիոյ առաջնութեան, եւ մէկական անգամ՝ Սպանիոյ թագաւորի եւ Սուվորո բաժակներուն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Հանգուցեալ ՆԱՀԱՏԱԿ ՆԱԶԱՐԷԹ ՄԱԼ ՃԵՄՆԻ



Հանգուցեալի մահուան տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 10 Նոյեմբեր 2019-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Զառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ


Ֆուրուհեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մեծ ընտանիքին եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԱՐԻ ՖՈՒՐՈՒՆՃԵՄՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունչի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2019-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս: 2այս ընդունիլ իբրեւ հրաւեր:



ՀԱՐՈՐՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԵՐՈՅ...

Սկիզբ՝ էջ 1

ցական, քրիստոնեական դաստիարակութեան, կրթական, կալուածական, տնտեսական, ընկերային ծառայութեան, մարդասիրական, դատաստանական, Վերականգնումի եւ Վերաշինութեան բնագաւառներու լայնածիր գործունեութիւնները:

Ժողովը իր գնահատանքը արձանագրեց շրջանաւարտ կազմերուն, անոնց կողմէ տարուած բազմաբնոյթ աշխատանքը նկատելով խօսուն ապացոյց, որ յաջողած են տնտեսել, ըստ կարելոյն հասնիլ մեր ժողովուրդի գաւակներուն առաջնահերթ կարիքներուն, արտայայտելով, որպէս կազմակերպ հաւաքականութիւն գործելու կրողն ու կամը:

Յետ գեկոյցի ներկայացման եւ տեղեկագիրներու ընթերցման, քննարկման ու գնահատման, ներկայացուցեց անաշարկներ եւ ժողովս հաստատեց. -

1. - Ամբողջական հաւատարմութեամբ եւ ամուր հաւատքով անասան պահել Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Հայ Առաքելական Եկեղեցին:

2. - Ժողովս իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ Ճեզիրէի հայութեան անոր դիմակալած տագնապին մէջ, նիւթական թէ բարոյական տուեալներով նեցուկ կանգնելով Ճեզիրէի ամբողջ շրջանի հայութեան, նոյնպէս Դամասկոսի շրջանին, որ ունի թեմէն իր ակնկալութիւնները յատկապէս դպրոց - համալիրի վերաշինութեան առնչուած դժուարութիւնները հաղթաբարելու:

րութիւնները հաղթաբարելու:

3. - Ժողովը կը դատապարտէ թրքական ցեղասպանական եւ ծաւալապաշտական միտումներով յարձակումը Սուրիոյ հիւսիսային շրջաններուն վրայ, ուր վտանգուեցան նաեւ հայ համայնքները, եւ զօրակցութիւն կը յայտնէ Սուրիական հայրենիքի հողային եւ պետականութեան ամբողջականութեան, հաւատարմութեան մարտունակութեան եւ



Սուրիոյ մէջ ապրող ժողովուրդի միասնականութեան: Ինչպէս նաեւ կը վերահաստատէ սուրիահայութեան գոյերթը շարունակելու հաստատականութիւնը եւ սուրիական հայրենիքի հանդէպ իր հաւատարմութիւնը:

4. - Ամբողջական աջակցութեամբ կը զօրակցի՝ այս օրերուն տագնապի մէջ յայտնուող լիբանահայութեան:

5. - Վերակազմակերպման աշխատանքներու ծիրէն ներս, մասնագիտական սերտողութիւններով վերանայիլ՝ ուսումնական, կալուածային եւ տնտեսական բնագաւառներուն առնչուած բոլոր հարցերը:

րուն առնչուած բոլոր հարցերը:

6. - Գործնական աջակցութիւն ցուցաբերել, սորընտիր գործադիր մարմիններու ծրագրային աշխատանքներուն:

Ապա տեղի ունեցաւ Թեմի Գործադիր Իշխանութեան երկու սոր կազմերու ընտրութիւնը հետեւեալ ձեւով. -

Ազգ. Կրօնական Ժողովի Կազմ
Հոգ. Ս. Լեւոն Արք. Եղիայեան

Տիար Պայքար Թովմասեան
Տիար Հրայր Թրթռեան
Ընտրուեցաւ նաեւ Ազգ. Երեսփոխանական Ժողովի սոր Դիւանը՝ Տիար Ժիրայր Ռէսեան Ատենապետ

Տիար Սունայուլ Սունայուլեան Ատենապետ

Արժ. Ս. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեան Ատենադպիր

Օրդ. Սիլվա Ճապաղչուրեան Ատենադպիր

Նիստի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը փառք եւ գոհութիւն յայտնեց Ամենակալին, նաեւ գնահատանքը՝ շրջանաւարտ կազմերուն եւ շնորհաւորութիւնները՝ սորընտիր կազմերուն եւ բարձր գնահատեց բոլորին ծառայութեան միասնական ոգին, որ երաշխիքն է աշխատանքի յաջողութեան եւ բարի աւարտին:

Ողջունեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երկու միաբաններու գործուղումը Թեմ եւ մասնակցութիւնը աշխատանքներուն:

Որդիական շնորհակալութիւնները յայտնեց Վեհափառ Հայրապետին, անձնապէս եւ յանուն ժողովականութեան՝ մաղթելով քաջառողջութիւն եւ արեւշատութիւն: Ինչպէս նաեւ Աստուծոյ օրհնութիւնը հայցեց սուրիական հայրենիքին եւ մեր ժողովուրդին համար եւ աղօթք ու յարգանք անոր անվտանգութեան ճանապարհին գոհուած բոլոր նահատակներուն:

Նիստը փակուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր Պահպանիչով եւ «Կիլիկիա» Մաղթերգի համախումբ երգեցողութեամբ:

ՀԱՐՈՐՎԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՕՒՆԻ...

Սկիզբ՝ էջ 1

դակցական ծայրով մասնակիցներու եւ հրաւիրեալներու:

Ժողովը լսեց Շրջ. Վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրները, կատարեց ըստ էութեան քննարկում՝ տուաւ առաջարկներ:

Ժողովի աւարտին ընտրուեցաւ **Շրջ. Վարչութեան սոր կազմ**, բաղկացած հետեւեալ ընկերուիներէն
Ընկ. Սեդա Կերկերեան
Ընկ. Պայծիկ Զեյնեան
Ընկ. Սիւզի Փիլաւեան

Ընկ. Մայտա Աւագեան
Ընկ. Հուրի Մուսալի
Ընկ. Շողիկ Տէր Պողոսեան
Ընկ. Լեւա Էլէճեան
Ընկ. Հուրի Գարամարտեան (Լաթաքիա)

Ընկ. Անի Սարգիսեան (Ճեզիրէ)
Ընկ. Զրիստին Սեթիկեան (Դամասկոս)
Ընկ. Նարինէ Փանոսեան (Բեսապ)

Փոխ անդամներ ընտրուեցան
Ընկ. Սոնա Տէր Պողոսեան
Ընկ. Արփի Առաքելեան
Ընկ. Մարինա Գեւորեան
Ժողովը փակուեցաւ Ս.Օ. Խաչի քայլերգով:



ՀԱՐՈՐՎԱԳՐՈՒԹԻՒՆ...

Սկիզբ՝ էջ 1

եանի, Պատկան Մարմինի եւ Համագայինի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներուն, մասնաճիւղերու 19 լիազօր ներկայացուցիչներու, միաւորներու եւ հրաւիրեալ խորհրդակցական ներկայացուցիչներու:

Ժողովին ընթացաւարտ Շրջանային Վարչութեան նիւթաբարոյական տեղեկագրին հիման վրայ մօտէն քննուեցաւ եւ արժեւորուեցաւ նախորդ շրջանի գործունեութիւնը: Ժողովը հաստատել է տեղ յառաջիկայ շրջանի մարտավարութիւնն ու ծրագիրները, ընտրեց **Շրջ. Վարչութեան**

եան հետեւեալ կազմը.

Ընկ. Պերճ Պողիկեան ատենապետ

Ընկ. Յուլիկ Ղազարեան ատենադպիր

Ընկ. Սոնիա Գաբրիէլեան գանձապահ

Ընկ. Անդրանիկ Մանսուրեան հաշուապահ

Ընկ. Շակոբ Ուրիշիկեան խորհրդական

Ընկ. Յարութ Պարոնեան խորհրդական

Ընկ. Շուշիկ Ղազարեան խորհրդական

Ընկ. Նայիրի Կարապետեան խորհրդական (Լաթաքիա)

Ընկ. Սեւան Մանճիկեան խորհրդական (Բեսապ)